

ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ 7

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՄԱՏԱՐԵԱ
ԵՐԼԱՆ 2023

Երաշխավորված է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

**Գրականություն 7: Մեթոդական ուղեցույց /Ա. Նիկողոսյան,
Ա. Վարդանյան.– Եր.: Անտարես, 2023.– 102 էջ:**

© ԿԳՄՍՆ, 2023

© «Անտարես», 2023

© Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա., 2023

Բոլոր իրավունքները պաշտպանված են



Վճարես

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Գրականություն» առարկան բացառիկ է դպրոցական առարկաների շարքում, քանի որ գրականության շնորհիվ երեխան հնարավորություն է ունենում նայելու իր ներաշխարհի խորքերը, մտորելու իր և աշխարհի փոխհարաբերությունների մասին, ձևավորելու գեղագիտական ընկալում և ճաշակ, մարդկային արժեքներ, հմտություններ, որոնք անհրաժեշտ են կիրթ, բանիմաց, լայնախոհ անհատ ու քաղաքացի դառնալու համար:

21-րդ դարում արագորեն զարգանում են տեղեկատվական տեխնոլոգիաները: Ներկա սերունդը հրաշալի տիրապետում է տեղեկատվական սարքերին, արագ յուրացնում դրանց բազմազան գործառույթները, օգտվում դրանց առավելություններից, սակայն կրթության մեջ դրանց ներդրումը դանդաղ է ընթանում: Դասագիրքը հարմարեցված է նոր տեխնոլոգիաների պահանջներին, ինտերակտիվ ու գրավիչ է, նպատակ ունի բավարարելու երեխայի մեջ գեղագիտական բարձր ճաշակ ձևավորելուն, ունի գործնական ուղղվածություն:

Շարադրանքի լեզուն մատչելի է, համապատասխանում է երեխայի տարիքային առանձնահատկություններին: Գրականագիտական խրթին ձևակերպումներ չկան: Իսկ բնագրերի դեպքում պահպանվել է դրանց հեղինակային կետադրությունը և ուղղագրությունը:

Դասագիրքը ոչ թե սոսկ ընթերցարան կամ տեղեկատու է, այլ աշխատանքային գիրք՝ հագեցած գործնական հարցերով և առաջադրանքներով: Լուսանկարները, գեղանկարները, լրացուցիչ նյութերը միտված են մատուցվող նյութն ավելի հետաքրքիր, գրավիչ ու տպավորիչ դարձնելուն, գրողի կյանքին առնչվող տեղավայրերի, մարդկանց մասին ավելի ընդգրկուն տեղեկություն տալուն:

Թե՛ կենսագրությանը, թե՛ ծրագրային ստեղծագործություններին վերաբերող տարատեսակ առաջադրանքների մի մասը տրվում է և՛ լուսանցքում, որպեսզի աշակերտն ընթերցելուն զուգահեռ աշխատի, և՛ վերջում, երբ արդեն ամփոփվում է տվյալ թեման: Առաջադրանքները կազմված են պարզից բարդ սկզբունքով, տարամակարդակ են ու տարաբնույթ, որպեսզի ուսուցիչը կարողանա հեշտորեն, արդյունավետ օգտվել մեթոդական գործիքակազմից՝ հաշվի առնելով դասարանի ուսումնական առաջընթացը, աշակերտների թվաքանակը և այլ հանգամանքներ:

Լրացուցիչ թեմաները պետք է օգտագործվեն ոչ միայն գիտելիքի ամրապնդման, այլև նոր գիտելիքի ձեռքբերման համար:

Այդ թեմաներում ներդրված են տեսական նոր առաջադրանքներ:

Ամփոփիչ գործնական առաջադրանքները և հետազոտական աշխատանքների թեմաները դասագրքում ունեն զուտ ուղղորդող նշանակություն:

Հարգելի՛ ուսուցիչ, խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել դասագրքի կառուցվածքը, այս ձեռնարկում ներկայացված հայեցակարգը, առարկայական վերջնարդյունքները, հետևել առաջարկվող մեթոդական ցուցումներին, բայց միևնույն ժամանակ ազատ լինել դասավանդման գործընթացում: Պահպանելով չափորոշչային, ծրագրային պահանջները՝ դու կարող ես ինքնուրույն առաջադրանքներ ստեղծել, գործնական և հետազոտական աշխատանքներ կազմել՝ քո դասավանդած դասարանի պահանջներին համապատասխան:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7 ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Գրականության 7-րդ դասարանի առարկայական ծրագրով նախատեսված է ուսումնասիրել 12 հեղինակի կենսագրությունն ու ստեղծագործության բնութագիրը, ինչպես նաև ծանոթանալ և յուրացնել տեսական համապատասխան նյութեր (պատմվածք, կերպար, բանաստեղծություն, հանգ, դիպաշար և այլն):

Դասագրքում, առարկայական ծրագրով և առարկայական չափորոշիչներով պայմանավորված, կարևորվում և զարգացվում են հետևյալ հմտություններն ու կարողությունները՝

- տեքստի արտահայտիչ ընթերցանություն.
- լեզվաոճական առանձնահատկությունների ընկալում.
- առաջնայինը երկրորդականից տարբերակելու կարողություն.
- համադրելու, զուգադրելու, համեմատելու, հակադրելու և համապատասխան եզրակացություններ անելու կարողություն.
- սեփական դատողությունները հասկանալի, հիմնավորված և անկաշկանդ ներկայացնելու կարողություն.
- թեմային համապատասխան ինքնուրույն հարցադրումներ անելու կարողություն.
- տեքստի համապատասխան հատվածները գտնելու, տեղին և հիմնավորված մեջբերումներ անելու կարողություն.
- ստեղծարարություն.
- վերլուծական և հետազոտական հմտություններ.
- գրական երկը, կերպարը, երևույթը բնութագրելու կարողություն.
- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ՝ բանավոր և գրավոր եղանակով որևէ թեմա ներկայացնելու կարողություն.

- միջառարկայական կապերի ընկալում, նույն երևույթը, հասկացությունը, թեման տարբեր դիտանկյուններից գննելու կարողություն:

Կարևորվում են նաև վերառարկայական այնպիսի կարողություններ և հմտություններ, ինչպիսիք են՝

- ինքնակազմակերպման և ինքնակառավարման հմտություն, աշակերտը պետք է կարողանա ինքնուրույն պլանավորել և կատարել իր աշխատանքը.
- սովորել սովորելու հմտություն.
- ինքնուրույն գտնելու նոր նյութեր, դրանք ներկայացնելու բազմազան ձևերի մշակում.
- միմյանց լսելու, փոխադարձ գնահատում, դիտարկումներ անելու կարողություն.
- ինքնաճանաչողություն.
- քաղաքացիական դիրքորոշում.
- հայրենասիրություն.
- բացահայտ և թաքնված կարողությունների և հմտությունների արտահայտում գրականություն ուսումնասիրելու միջոցով:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Դասարանում ապահովվե՞ք փոխադարձ հարգանքի, վստահության մթնոլորտ, որպեսզի բոլոր երեխաները ներգրավվեն, սիրով ու ոգևորությամբ աշխատեն:

Հիշե՞ք, որ գրականության դասը պետք է լինի մարդու հույզերի կառավարման, ներաշխարհի բացահայտման, ճաշակի ձևավորման ու մարդկային գեղեցիկ արժեքներին հաղորդակից դարձնելու դաս: Խրախուսե՞ք, որ երեխան ազատորեն խոսի թեմային առնչվող իր ապրումներից, հույզերից, զգացողություններից:

Հարգե՞ք երեխայի անհատականությունը, գրականությունը ընկալելու կարողությունը, հետաքրքրությունները: Մի պարտադրեք ձեր գրական ճաշակը, լավի ու վատի, գեղեցիկի ու տգեղի ընկալումը, օգնե՞ք, որ երեխան ինքնուրույն ձևավորի ճաշակ, դատողություններ անելու կարողություն:

Խուսափե՞ք դասարանում մենախոսելուց, դասախոսություն կարդալուց՝ բացառությամբ հակիրճ դասախոսությունների, դիտարկումների: Թողե՞ք, որ երեխաներն ինքնուրույն աշխատեն:

Դասը կազմակերպե՞ք այնպես, որ բոլոր երեխաներն զբաղված լինեն՝ հաշվի առնելով նաև նրանց նախասիրությունները:

Դասն անցկացրե՞ք գործնական և աշխույժ՝ հագեցած տարաբնույթ մեթոդական հնարներով, հաճախ կազմակերպե՞ք դերային խաղեր, դասն անցկացրե՞ք հեռուստատեսային հաղորդման, բլոգների ձևաչափով. երեխաների երևակայությունն անսպառ է: Ոգևորե՞ք ու խրախուսե՞ք նրանց:

Ապահովե՞ք նյութի շարունակականությունը և անընդմեջ ամրապնդե՞ք նախորդ նյութը:

Կենսագրական փաստերի անգիր իմացությունը մի պարտադրեք. խրախուսե՞ք, որ երեխան ինքնուրույն գտնի գրողի

մասին հետաքրքիր տեղեկություններ, դրանք ներկայացնի սեփական դատողություններով:

Եթե դասարանն ապահովված է տեխնիկայով, ապա դասերի ժամանակ կազմակերպեք համակարգչային ցուցադրություններ, ֆիլմերի դիտում-քննարկումներ, երաժշտության ունկնդրում, գեղանկարների ցուցադրություն:

Առհասարակ, գրականությունը համադրեք արվեստի այլ ճյուղերի հետ: Դասագրքում հայ և համաշխարհային կերպարվեստի նմուշներ կան, ինքնուրույն կամ աշակերտների հետ գտեք նման նկարներ, քանդակներ: Ուշադրություն դարձրեք երեխաների սահուն և արտահայտիչ ընթերցանությանը, կազմակերպեք ասմունքի, ընթերցանության փառատոներ, մրցույթներ, սակայն մի խրախուսեք վերամբարձ և անհարկի շեշտադրումներով արտասանությունը:

Հետևեք դասագրքի մեթոդական ցուցումներին, առաջադրանքներին, սակայն մի՛ սահմանափակվեք դրանցով: Այդ առաջադրանքները, հարցադրումները հուշող, ուղղորդող բնույթ ունեն: Դրանք հարմարեցրեք ձեր դասարանի ընդհանուր վիճակին, սովորողների հետաքրքրություններին, թվաքանակին, դասարանի բարոյահոգեբանական մթնոլորտին:

Դասագրքում կան հատուկ առաջադրանքների նմուշներ հատուկ օժտվածություն կամ տարբեր նախասիրություններ, հետաքրքրություններ ունեցող աշակերտների համար: Խրախուսեք, որ երեխան գրողին, տվյալ ստեղծագործությունը ընկալի նաև իր նախասիրությունների միջոցով:

Գովեք երեխաների արած աշխատանքը թե՛ խոսքով, թե՛ թվանշանով, բայց մի՛ ստեղծեք կախվածություն գնահատականից: Երեխայի համար լավագույն գնահատականը պիտի լինի իր աշխատանքի արդյունքը տեսնելը, կարողությունների, հմտությունների զարգացումը, գրական ճաշակ ձևավորելը:

Դասագրքի տարամակարդակ առաջադրանքները միտված են ձեր աշխատանքը հեշտացնելուն: Մի՛ սահմանափակեք աշակերտներին: Ինքներդ որոշեք երեխայի կարողություններին համապատասխան առաջադրանքը:



ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասագրքի կառուցվածքը պարզ է: Այն հարմարեցված է սովորողակենտրոն ուսուցմանը, տրվում են տեսական նյութը, բնագրերը, արձակի դեպքում դրան զուգահեռ, իսկ չափածոյի դեպքում՝ վերջում տրվում են տարաբնույթ և տարամակարդակ առաջադրանքներ: Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կան տեսողական (վիզուալ) և աուդիո նյութեր՝ նկարներ, աղյուսակներ, ձայնագրություններ, հոլովակներ, ֆիլմեր, նկարներ հայ և համաշխարհային կերպարվեստից, քանդակագործությունից, որոնց մասին կան հակիրճ տեղեկություններ:

Դասագրքում կիրառվել են պայմանական նշաններ, որոնցով ավելի հեշտ է դառնում ուսուցչի և աշակերտի աշխատանքը: Ուսումնական տարվա սկզբում աշակերտներին պետք է հանգամանալից բացատրել դասագրքով աշխատելու կանոնները, առանձնահատկությունները:

1. Հեղինակի լուսանկար: Ընտրված է տվյալ հեղինակի՝ համեմատաբար անծանոթ կամ քիչ տարածված լուսանկար, որը միևնույն ժամանակ ֆոտոարվեստի նմուշ է: Լուսանկարի վերևի մասում առկա է նմուշ տվյալ գրողի ձեռագրից: Ներքևի մասում տվյալ գրողի ստորագրությունն է:

2. Կենսագրական հակիրճ տեղեկություններ: Ստեղծագործության ընդհանուր բնութագիր: Ներկայացվում են տվյալ գրողի կյանքի հիմնական տարեթվերն ու դեպքերը, և ստեղծագործության գլխավոր տարեթվերն ու վերնագրերը:

3. Լուսանցք, որտեղ ներկայացված են՝

ա) **հավելյալ տեղեկություններ** տվյալ հեղինակի կյանքի ու ստեղծագործության մասին, որոնք իմանալը կարևոր է, բայց պարտադիր չէ:

բ) տվյալ հեղինակի կյանքին և գործունեությանը առնչվող **հետաքրքրաշարժ փաստեր, տեղեկություններ** և **լուսանկարներ**.

գ) **QR կոդեր** (էլեկտրոնային հղումներ), որոնց միջոցով հնարավոր է դիտել կամ լսել թեմային առնչվող ֆիլմեր, հոլովակներ, հաղորդումներ, երգեր, ինչպես նաև՝ գրողների՝ դասագրքում ներկայացված ստեղծագործություններ.

դ) գրականագիտական **հասկացությունների և տերմինների** բացատրություններ, **տեսական նյութ**.

ե) բնագրի հետ արդյունավետ աշխատելուն և այն ավելի լավ ընկալելուն ու մեկնաբանելուն միտված ընթացիկ **առաջադրանքներ, հարցեր, հուշումներ, ցուցումներ, հանձնարարականներ** և այլն:

4. Եթե գրողն ունի **տուն-թանգարան**, ապա կենսագրության հատվածում առկա են լուսանկարներ, ընդհանուր տեղեկություններ թանգարանի մասին:

5. **Հեղինակի կյանքին, ստեղծագործությանը, ինչպես նաև բնագրերի բովանդակությանն առնչվող նկար, գեղանկար կամ լուսանկար:** Այս նյութերը, մի կողմից, տեղեկատվական են, մյուս կողմից՝ զարգացնում են գեղագիտական ճաշակ և գիտելիք:

6. **Բնագիր:** Տրված է ստեղծագործությունը ամբողջական կամ հատվածաբար: Ընդ որում՝ պահպանված են հեղինակի կիրառած ուղղագրությունը և կետադրությունը:

7. **Հարցեր և առաջադրանքներ:** Կյանքի և ստեղծագործության, ինչպես նաև՝ չափածո ստեղծագործությունների դեպքում դրանք տրված են վերջում: Արձակ ստեղծագործությունների դեպքում դրանք լուսանցքում են՝ տեքստի հետ զուգահեռ աշխատելու համար:

8. **Անհատական աշխատանքի և խմբային աշխատանքի** առաջադրանքի նմուշներ, որոնք կարելի է փոփոխել, տեղայնացնել՝ հարմարեցնելով դասարանի պահանջներին:

9. **Արևի նշանով հատուկ հարցեր**, որոնք նախատեսված են հատուկ հետաքրքրություն, օժտվածություն ունեցող

երեխաների համար: Դրանք չպետք է հանձնարարել ամբողջ դասարանին: Եթե ձեր դասավանդած խմբում կան նման աշակերտներ, ապա ինքներդ տվե՛ք այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են տվյալ երեխայի նախասիրություններին:

10. **Բառարանը** տրված է ըստ անհրաժեշտության՝ կախված բնագրում առկա անձանոթ բառերից:

11. Դասագրքում գործածվել են **գունային տարբերակիչ նշաններ**: Ժանրերը տարբերակված են ըստ գույների: Տեսողական հիշողության շնորհիվ երեխան կյուրացնի տվյալ ստեղծագործության ժանրային պատկանելությունը: Օրինակ՝

Բանաստեղծություն

Ինքնակենսագրական վեպ, վեպ, վիպակ






Պիես








Պոեմ

Պատմվածք

Բալլադ

Օգտագործվել են հետևյալ պայմանական նշանները՝

	հավելյալ տեղեկություն գրողի կյանքի, ստեղծագործության մասին
	գրականագիտական տեսական նյութ
	ձայնագրություն
	տեսանյութ
	երգ, երաժշտություն

	գեղանկար
	լուսանկար
	տեղավայր
	հարցեր և առաջադրանքներ
	անհատական հարց կամ առաջադրանք
	խմբային հարց կամ առաջադրանք
	հատուկ առաջադրանք օժտվածություն կամ կրթական հատուկ կարիքներով երեխաների համար



ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Լավ ճանաչեք ձեր դասավանդած խմբի երեխաներին: Եթե առաջին անգամ եք մտնում տվյալ դասարան, մեկ դասաժամ հատկացրե՛ք ծանոթության դասին: Իմացե՛ք՝ որ երեխան ինչ նախասիրություններ, հետաքրքրություններ ունի, ինչպես է ավելի հեշտ սովորում, անձնային ինչ առանձնահատկություններ ունի:

Առաջադրանքները հստակ ու պարզ ձևակերպեք:

Քայլ առ քայլ բացատրե՛ք անելիքների հերթականությունը և ցանկալի արդյունքը:

Սովորեցրե՛ք սեփական աշխատանքի վերլուծություն: Օրինակ՝ այսպիսի աղյուսակի ձևով:

Ինչ արեցի	
Որքան ժամանակ էր պետք	
Ինչ արդյունք էի ակնկալում	
Ինչ արդյունք ունեցա	
Որո՞նք են իմ ուժեղ կողմերը	
Որո՞նք են իմ բացթողումները, որոնց շուրջ պիտի աշխատեմ	

Սահմանե՛ք առաջադրանքների կատարման հստակ ժամանակ, անպայման հետևե՛ք, որ տվյալ ժամանակահատվածում աշխատանքն ավարտեն:

Միասին սահմանե՞ք միմյանց լսելու, միմյանց կարծիքը հարգելու, համատեղ աշխատելու կանոններ:

Ձեռնարկի **հավելվածում** տրված են որոշակի մեթոդներ և դրանց նկարագրությունը: Դասի պլանը մշակելիս օգտվե՞ք դրանցից:

Պետք է պարտադրել, որ երեխան անգիր իմանա գրողի կենսագրության տարեթվերն ու դրվագները, լավ կլինի, որ նա սովորի դրանք մասերի բաժանել, իր համար գլխավորն ու երկրորդականն առանձնացնել, եզրահանգումներ անել:

Գրողի կենսագրության դասը կարելի է կազմակերպել մեկ դասաժամի ընթացքում: Հենց դասարանում երեխաները անհատական կամ խմբերով թող ընթերցեն նյութը: Լավ կլինի, որ դասի թեմային առնչվող նյութերը նախապես տպեք և դասարանում աշխատանքներ հանձնարարեք:

Ստորև ներկայացվում են բոլոր դասերի վերաբերյալ ընդհանուր ցուցումներ: Օգտվե՞ք դրանցից, բայց մի՛ սահմանափակվե՞ք դրանցով: Համադրե՞ք մեթոդները, հարմարեցրե՞ք ձեր դասարանի պահանջներին:

Մի քանի մեթոդ, որոնք հարմար է կիրառել խթանման փուլում՝

- *Մտագրոհ*
- *Խմբավորում*
- *Պրիզմա*
- *Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր*
- *5-րոպեանոց ազատ շարադրանք*
- *Ուղղորդված ընթերցանություն*

**Իմաստի ընկալման
փուլում նպատակահարմար մեթոդներից են՝**

- T-աձև աղյուսակ
- Վենի դիագրամ
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Հարցազրույց
- Հակիրճ դասախոսություն
- Կարուսել
- Ապագայի անիվ
- Խորանարդում
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում

**Կշռադատման փուլում
նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները՝**

- Քառաբաժանում
- ԳՈՒՍ (Գիտեմ-Ուզում եմ Սովորել-Սովորել եմ)
- Երեք բանալի, մեկ կողպեք

ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Ընդունված է դասերն ըստ կառուցվածքի բաժանել հետևյալ տեսակների՝

1. Նոր նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս
3. Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս
4. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս
5. Կրկնողության դաս
6. Ստուգողական կամ սխալների ուղղման դաս
8. Համակցված դաս և այլն:

Մեր կարծիքով՝ գրականության բոլոր դասերի դեպքում էլ հնարավոր է այս տեսակներին բնորոշ տարրերի առկայություն: Այդ պատճառով դասի պլանի նմուշ-օրինակները կազմվել են ըստ դասի բովանդակության տեսակի: Այսպիսով առանձնացրել ենք դասերի հետևյալ տեսակները՝

- **գրողի կենսագրության ուսումնասիրություն.**
- **չափածո երկի ուսումնասիրություն.**
- **արձակ երկի ուսումնասիրություն.**
- **գրականագիտական տեսական նյութի ուսումնասիրություն:**

Գրողի կենսագրության ուսումնասիրության դաս

Դասի թեման: Եղիշե Չարենցի կյանքը, ուսումնառությունը, ստեղծագործությունը:

Դասի նպատակներն ու խնդիրները՝

- Եղիշե Չարենցի կյանքի և ստեղծագործության ընդհանուր իմացություն:

- Տեղեկատվական տեքստի շուրջ աշխատելու ձևերի յուրացում:
- Չարենցի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացում կազմելը:
- Գեղագիտական ճաշակի զարգացում:

Դասին անհրաժեշտ ուսումնական նյութեր և պարագաներ

Դասագիրք, գրողի դիմանկարը, գրականության տետր, Ա1 չափսի թղթեր, հնարավորության դեպքում՝ նաև համակարգիչ

Առաջարկվող մեթոդներ

Մտագրոհ, փոխներգործուն գրառումների համակարգ, 5-րդպետնոց շարադրանք, քառաբաժանում

Դասի ընթացքը (փուլերի նկարագրություն և տևողություն)

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Չարենցի նկարին, ձեռագրին, ստորագրությանը: Մտագրոհի միջոցով հարցնել աշակերտների տպավորությունները, տետրում գրառումներ անել: Օրինակ՝ ըստ լուսանկարի, ինչպիսին է Չարենցը, ինչ բնավորություն ունի և այլն:

Քայլ 2

Հատվածաբար ընթերցել դասագրքի նյութը: Հնարավորության դեպքում լսել Չարենցի բանաստեղծությունների հիման վրա գրված երգեր: Դրանցից մեկը կողավորված ձևով տեղադրված է դասագրքում: Դասանյութի վերջում կան հարցեր և առաջադրանքներ: Դրանց մի մասի կատարումը հենց դասարանում կազմակերպել, մնացածը հանձնարարել որպես ինքնուրույն յուրացման առաջադրանք:

Ամփոփում

Հարցերի միջոցով ամփոփեք դասը: Թույլ տվեք, որ նաև աշակերտները կազմեն հարցեր: Այս փուլում նպատակահարմար է կիրառել, օրինակ, քառաբաժանում մեթոդը: Երեխաներին հանձնարարվում է տեսրում գծել չորս մասից բաղկացած սյունակ և լրացնել:

Ինչ գիտեի:

Ինչ իմացա:

Ինչո՞վ է այն օգտակար և ուսանելի:

Ինչ եզրակացություններ արեցի:

Անդրադարձ

Արդյունքում աշակերտը պատկերացում է կազմում Եղիշե Չարենցի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին:

Լուսանկարների, գեղանկարների, տեսանյութը դիտելու և երգ ունկնդրելու շնորհիվ ծանոթանում է գրողի մարդկային կերպարին, նրա ստեղծագործության մոտիվներին, ձևավորում է որոշակի գեղագիտական ճաշակ:

Չափաժո երկի ուսումնասիրության դաս

Դասի թեման՝ Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:

Տևողությունը՝ 45 րոպե:

Դասի նպատակը՝ Բանաստեղծության արտահայտիչ ընթերցանություն:

Նոր բառերի յուրացում:

Բանաստեղծության ժանրային, բովանդակային, լեզվա-նճական առանձնահատկությունների քննարկում:

Անհրաժեշտ պարագաները

Դասագիրք, գործնական աշխատանքների տետր, թերթիկներ

Դասի ընթացքը

Քայլ 1

Հարցերի միջոցով ամփոփվում է նախորդ դասին յուրացրածը: Ընդ որում՝ հարցերը կարող են գրված լինել թերթիկների վրա:

Խթանման փուլ. 15 րոպե

Ուսուցիչը հանձնարարում է բացել գրքի համապատասխան էջը և նայել բանաստեղծության վերևում զետեղված նկարին, երկու րոպեում գրել հնարավորինս շատ բառեր, որոնք առնչվում են դրան: *5 րոպե*

Այնուհետև կարդում են այդ բառերը, դրանցով կազմում նախադասություններ Հայաստանի մասին: *5 րոպե*

Արտահայտիչ ընթերցում են բանաստեղծությունը: *5 րոպե*

Իմաստի ընկալման փուլ. 15 րոպե

1-ին մակարդակ

Բանաստեղծության մեջ ընդգծված են բառեր:

Հանձնարարել դուրս գրել դրանք և պարզել, թե հանգավորման դրոշմը տեսակն է կիրառված:

Այդ բառերով փորձել վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունը:

2-րդ մակարդակ

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ առանձնացրո՞ւ և խմբավորի՞ր հետևյալ ոլորտների բառերը, դրանցով կազմի՞ր նախադասություններ, որոնք առնչվում են բանաստեղծության բովանդակությանը.

ա) մշակույթ,

բ) բնություն,

գ) Հայաստան և հայկականություն:

Հայոց մեծերից ո՞ւմ է հիշատակում: Ովքե՞ր են նրանք:

Ինչ դեր ունեն հայոց պատմության և մշակույթի մեջ:
Փոքրիկ զեկուցում պատրաստիր այս թեմայով:

3-րդ մակարդակ

Պատկերացրո՛ւ, որ Չարենցն ինքը քեզ համար կարդացել է այս բանաստեղծությունը, և դու կարող ես քո դիտարկումներով օգնել նրան: Ինչ կավելացնեիր բանաստեղծության մեջ:

Բանաստեղծությունից առանձնացրո՛ւ մակդիրները, բանաստեղծությունն ընթերցիր առանց դրանց: Հետո փորձիր մեկնաբանել՝ ինչ դեր ունեն այդ բառերը բանաստեղծության մեջ:

Կշռադատման փուլ. 15 րոպե

Առաջադրանքը կարող են կատարել զույգերով:

1-ին մակարդակ

Գրիր կարծիք բանաստեղծության մասին:

2-րդ մակարդակ

Քո ծննդավայրի մասին մտքերդ շարադրիր «Ես իմ անուշ

3-րդ մակարդակ

Փորձիր ինքդ չափածո կամ արձակ շարադրել մտքերդ՝ «Ես իմ անուշ Հայաստանի» վերնագրով:

Ամփոփում:

Ինչ սովորեցի:

Ինչ նոր բան իմացա:

Անդրադարձ

Աշակերտը կհիմանա

- Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության պատկերավորման համակարգը, ժանրային առանձնահատկությունները:

Աշակերտը կկարողանա

- արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը.
- բանաստեղծական տեքստի շուրջ աշխատել տարբեր եղանակներով.
- առանձնացնել գլխավորը և երկրորդականը.
- փաստերը համադրելով եզրակացություն կատարել:

Արձակ երկի ուսումնասիրության դաս

Դասի թեման՝ Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքը

Տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակը՝ Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի, գաղափարի, կերպարների, բաղադրիչների մասին գիտելիքի ամփոփումն է:

Անհրաժեշտ պարագաները

Դասագիրք, գործնական աշխատանքների տետր, թերթիկներ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ. 10 րոպե

Հարցերի միջոցով ամփոփվում է նախորդ դասին յուրացրածը: Ընդ որում՝ հարցերը կարող են գրված լինել թերթիկների վրա: Դրանք լցվում են արկղիկի մեջ, հետո հերթով ամեն մեկը վերցնում է մի հարց և պատասխանում է:

Իմաստի ընկալման փուլ. 20 րոպե

Պատմվածքից հետո տրված են անհատական և խմբային աշխատանքի ձևեր: Ըստ դասարանի պահանջի՝ կատարել դրանք: Խրախուսել, որ ստեղծագործական հակում ունեցող աշակերտները գրեն պատմվածք՝ հաշվի առնելով իրենց սովորածը:

Կշռադատման փուլ. 15 րոպե

Աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները: Կատարում են փոխադարձ գնահատում: Դասարանը դիտարկումներ է անում, անհրաժեշտության դեպքում ուղղում սխալները:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- Ակսել Բակունցի «Սպիտակ ծին» պատմվածքի դիպաշարը, գաղափարական բովանդակությունը, դիպաշարի կառուցվածքային տարրերը:

Աշակերտը կկարողանա

- կարդալուն զուգահեռ աշխատել տեքստի շուրջ.
- ինքնուրույն դատողություններ անել՝ հիմնվելով սովորած գիտելիքի վրա.
- գեղարվեստական երկում առանձնացնել դիպաշարի կառուցվածքային տարրերը:

**ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Ես իմ անուշ Հայաստանի»
«Հայրենիքում», «Տաղ անձնական» բանաստեղ-
ծությունները: Բանաստեղծության ժանրային
բնութագիրը:
Հանգ: Հանգավորման ձևեր:**

ԴԱՍ 1 Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը

Գրողի կենսագրությունն ուսումնասիրելը կարևոր է, որ աշակերտն ընդհանուր պատկերացում ունենա տվյալ գրողի ապրած ժամանակաշրջանի, մարդկային կերպարի, հիմնական ստեղծագործությունների մասին:

Նպատակ

Դասի նպատակն է Եղիշե Չարենցի կյանքի և ստեղծագործության մասին ընդհանուր տեղեկությունների յուրացումը, Չարենցի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացում կազմելը: Գեղագիտական ճաշակի զարգացումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Չարենցի նկարին, ձեռագրին, ստորագրությանը: Այս ձևով խթանում ենք երեխայի հետաքրքրությունը գրողի կերպարի, մարդկային նկարագրի նկատմամբ, մղում ինքնուրույն դատողություններ անելուն:

Մտագրոհի միջոցով հարցնել երեխաների տպավորությունները, նախնական կարծիքներ հավաքել: Պետք է թույլ տալ, որ աշակերտները անկաշկանդ կարծիք հայտնեն:

Քայլ 2

Հատվածաբար ընթերցել դասագրքի նյութը: Հնարավորության դեպքում լսել Չարենցի բանաստեղծությունների հիման վրա գրված երգեր, որպեսզի աշակերտների մեջ վերաբերմունք ձևավորվի գրողի հանդեպ, և նրանք կարողանան նկատել ու բնութագրել գրականության և արվեստի այլ տեսակների միջև կապը:

Նյութի վերջում կան հարցեր և առաջադրանքներ: Դրանց մի մասը հենց դասարանում հանձնարարել: Մյուս մասն էլ կարելի է տալ որպես ինքնուրույն աշխատանք՝ այսպիսով նպաստելով աշակերտի ինքնակառավարման հմտության մեծացմանը:

Խրախուսեք, որ երեխաները կատարեն հատկապես բարդ առաջադրանքները, սակայն մի՛ պիտակավորեք երեխաներին: Այդ պայմանական գունանշանները ձեր աշխատանքը հեշտ կազմակերպելու համար են: Ինքներդ էլ կարող եք այդ առաջադրանքների նմանությամբ ստեղծել հարցեր և առաջադրանքներ՝ դասարանի ուսումնական, վարքային և բարոյահոգեբանական մթնոլորտին համապատասխան:

Ամփոփում

Հարցերի միջոցով ամփոփվում է դասը: Թույլ տվեք, որ նաև երեխաները կազմեն հարցեր: Դրանով կզարգացնեք երեխայի ինքնուրույն աշխատելու հմտությունը: Այս փուլում նպատակահարմար է կիրառել, օրինակ, քառաբաժանում մեթոդը: Երեխաներին հանձնարարվում է տետրում գծել չորս մասից բաղկացած սյունակ և լրացնել:

Ինչ գիտեի:	Ինչ իմացա:
Ինչո՞վ է այն օգտակար և ուսանելի:	Ինչ եզրակացություններ արեցի:

Անդրադարձ

Արդյունքում աշակերտը պատկերացում է կազմում Եղիշե Չարենցի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին: Լուսանկարների, գեղանկարների, տեսանյութը դիտելու և երգ ունկնդրելու շնորհիվ ծանոթանում է գրողի մարդկային կերպարին, նրա ստեղծագործության մոտիվներին, ձևավորում է որոշակի գեղագիտական ճաշակ:

Միջառարկայական կապեր

Թեման ուսումնասիրելիս ուշադրություն դարձնել տեղավայրերին՝ ապահովելով աշխարհագրության և պատմության հետ կապը: Կենսագրության մեջ տեղավայրերը գրված են մուգ տառերով: Հանձնարարեք, որ աշակերտները դրանց մասին պատմական և աշխարհագրական փաստեր հավաքեն և ներկայացնեն դասընկերներին: Օրինակ՝ Կարս քաղաքի պատմությունը, աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, բնակչությունը Չարենցի ժամանակներում և այժմ: Որպես ամփոփում՝ ծննդավայրի ազդեցությունը գրողի ճակատագրի վրա:

Հուշում

Եղիշե Չարենցի կենսագրությունն ու ստեղծագործական ընթացքը իրականում շատ ավելի ընդգրկուն ու բազմազան է, քան ներկայացված է դասագրքում: Հաշվի են առնվել աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Հանրամատչելի լեզվով տրված են Եղիշե Չարենցի կենսագրության կարևոր դեպքերը, հիմնական ստեղծագործությունների հակիրճ բնութագրերը: Չարենցի կերպարի հակասականությունն

ու խոր ողբերգականությունը ցանկալի է ներկայացնել դասարանում՝ օգտվելով նրա մասին բազմաթիվ հուշագրական գրքերից: Օրինակ՝ «Չարենցի հետ. հուշեր», Երևան, 1997:

**ԴԱՍ 2 «Ես իմ անուշ Հայաստանի»
բանաստեղծությունը: Հանգի մասին
գիտելիքի ամրապնդում:
Հանգավորման տեսակները:**

Այս թեման տրված է որպես դասի պլանի նմուշօրինակ:

**ԴԱՍ 3 «Հայրենիքում» բանաստեղծությունը:
Բանաստեղծության ժանրային
բնութագիրը:**

Նպատակ

Դասի նպատակը բանաստեղծության սահուն և արտահայտիչ ընթերցանության, բառապաշարի յուրացումն է, պատկերների, լեզվաոճական միավորների ուսումնասիրությունը, բանաստեղծությունը որպես ժանր բնութագրելու կարողությունը, աշակերտների մեջ հայրենասիրության ձևավորումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Բանաստեղծությունն արտահայտիչ ընթերցել: Հնարավորության և անհրաժեշտության դեպքում լսել ձայնագրությունը: Ձայնագրություն լսելը խրախուսվում է հատկապես այն առումով, որ երեխաները լսեն ճիշտ շեշտադրությամբ արտասանություն: Թույլ տեսողություն ունեցող աշակերտների հետ աշխատելիս ձայնագրություն լսելն ավելի արդյունավետ կլինի:

Անծանոթ և անհասկանալի բառերը դուրս գրել բառատետրում և բացատրել՝ այսպիսով հարստացնելով բառապաշարը:

Քայլ 2

Կարդալ լուսանցքում առկա նյութը բանաստեղծության ժանրային բնութագրի վերաբերյալ, խրախուսել, որ երեխաները կարողանան հասկանալով և սեփական բառերով վերարտադրել գրականագիտական տեքստը:

Սովորածը հաշվի առնելով՝ ապացուցել, որ «Հայրենիքում»-ը բանաստեղծություն է:

Ուշադրություն դարձնել Սեդրակ Առաքելյանի կտավին, համեմատել բանաստեղծության հետ: Խրախուսելի է, որ աշակերտները նաև ինքնուրույն կարողանան գտնել այդպիսի կտավներ, որոնք առնչվում են բանաստեղծության բովանդակությանը: Եթե դասարանում կան նկարող աշակերտներ, ապա նրանց հանձնարարեք նկարազարդել բանաստեղծությունը: Սա կարևոր է գրականության և արվեստի այլ ճյուղերի միջև կապը տեսնելու համար, ինչպես նաև գրականությունը սեփական կարողությունների միջոցով ճանաչել և սիրել տալու համար:

Ինքնուրույն աշխատանք հանձնարարել՝ պատասխանել բնագրից հետո տրված հարցերին և առաջադրանքներին:

Ամփոփում

Ինչպիսին էր Չարենցի պատկերած հայրենիքը:	Ի՞նչը ինձ դուր եկավ: Ի՞նչո՞ւ:	Ի՞նչպիսին է հայրենիքն իմ աչքերով:
---	-------------------------------	-----------------------------------

Դասարանը բաժանել երեք խմբի

- ա) Ո՞ր բառերն ու արտահայտություններն են արտահայտում բանաստեղծի մտերմիկ վերաբերմունքը հայրենիքի հանդեպ:
Ուշադիր նայիր նկարին և այն համեմատի՛ր բանաստեղծության հետ:
- բ) Բանաստեղծությունից դ՛ուրս գրի՛ր հայրենիքին բնութագրող բառերը:
- գ) Ի՞նչ գույներ տեսար, ի՞նչ ձայներ լսեցիր բանաստեղծությունն ընթերցելիս:

Անդրադարձ

Աշակերտը կկարողանա

- ա) արտահայտիչ և սահուն ընթերցել բանաստեղծությունը.
- բ) ընկալել և մեկնաբանել պատկերները.
- գ) բանաստեղծությունը բնութագրել իբրև ժանր.
- դ) սովորած փաստերը համադրելով՝ ապացուցել տվյալ երկի ժանրային պատկանելությունը:

Հուշում

«Հայրենիքում» բանաստեղծությունը շատ հաճախ վերլուծում են որպես սիրային ստեղծագործություն: Աշակերտների հետ քննարկեք այդ խնդիրը: Փորձեք միասին վերլուծել, թե ինչու է այս բանաստեղծությունը հայրենասիրական և ոչ թե սիրային:

ԴԱՍ 4

**«Տաղ անձնական» բանաստեղծությունը:
Բանաստեղծության ժանրային բնութագրի
վերաբերյալ գիտելիքի ամրապնդում:**

Նպատակ

Դասի նպատակը բանաստեղծության սահուն և արտահայտիչ ընթերցանության, բառապաշարի յուրացումն է,

պատկերների, լեզվաոճական միավորների ուսումնասիրությունը, բանաստեղծությունը որպես ժանր բնութագրելու կարողությունը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Բանաստեղծությունն արտահայտիչ ընթերցել: Հնարավորության դեպքում լսել ճայնագրությունը: Անձանոթ և անհասկանալի բառերը գրել բառատետրում և սովորել բացատրությունը:

Քայլ 2

Վերհիշել լուսանցքում առկա նյութը բանաստեղծության ժանրային բնութագրի վերաբերյալ: Ըստ այդմ՝ բնութագրել այս բանաստեղծությունը:

Պատասխանել բնագրից հետո տրված հարցերին և առաջադրանքներին: Դրանց մի մասը պետք է անել դասարանում, իսկ մյուս մասը հանձնարարել որպես ինքնուրույն աշխատանք:

Ուշադրություն դարձնել լուսանկարին: Աշակերտներին հանձնարարել գտնել և ներկայացնել հավելյալ տեղեկություններ Կարսի մասին: Հատկապես ուշադրություն դարձնել, թե Կարսը պատմության մեջ ինչ դեր է ունեցել հայ ժողովրդի համար, երբ է այն հիմնադրվել, ինչպիսին էր այն առաջ, ինչպիսին է այն հիմա. այսպիսով ապահովել գրականության և պատմության միջառարկայական կապը:

Ամփոփում

Ինչ խոհ, զգացմունք, ապրում կար բանաստեղծության մեջ:	Ինչը ինձ դուր եկավ: Ինչո՞ւ:	Ինչը կփոխեի: Ինչո՞ւ:
---	-----------------------------	----------------------

Անդրադարձ

Աշակերտը կկարողանա

- ա) արտահայտիչ և սահուն ընթերցել բանաստեղծությունը.
- բ) ընկալել և մեկնաբանել պատկերները.
- գ) ամրապնդել գիտելիքները բանաստեղծական ժանրի մասին.
- դ) սովորած փաստերը համադրելով՝ ապացուցել տվյալ երկի ժանրային պատկանելությունը.
- ե) միջառարկայական կապերի միջոցով յուրացնել տվյալ թեման և ընկալել տարբեր երևույթների միջև կապը:

Քայլ 2

Կարդալ լուսանցքում առկա նյութը հանգի վերաբերյալ և սովորել: Կարողանալ բնագրի վրա ցույց տալ և հիմնավորել հանգի դերը և նշանակությունը:

Պատասխանել բնագրից հետո տրված հարցերին և առաջադրանքներին: Դրանց մի մասը պետք է անել դասարանում, իսկ մյուս մասը՝ որպես ինքնուրույն աշխատանք:

Ամփոփում

Ինչ խոհ, զգացմունք, ապրում կար բանաստեղծության մեջ:	Ինչը ինձ դուր եկավ: Ինչո՞ւ:	Ինչը կփոխեի: Ինչո՞ւ:
---	-----------------------------	----------------------

Անդրադարձ

Աշակերտը կկարողանա

- ա) արտահայտիչ և սահուն ընթերցել բանաստեղծությունը.
- բ) ընկալել և մեկնաբանել պատկերները.
- գ) ամրապնդել գիտելիքները բանաստեղծական ժանրի մասին, իմանալ՝ ինչ է հանգը, ինքնուրույն ստեղծել հանգավորված խոսք:

ԴԱՍ 5 Թեմայի ամփոփում:

Նպատակ

Եղիշե Չարենցի կենսագրության և ծրագրային ստեղծագործությունների իմացության ամփոփում, նոր գիտելիքը համադրելու և եզրակացություններ անելու հմտության զարգացում:

Դասի ընթացքը

Քայլ 1

Դասարանը բաժանվում է խմբերի, և խմբերը ստանում են ցուցումներ՝ պատրաստելու պաստառ Եղիշե Չարենցի բանաստեղծությունների թեմաներով: Սա ստացած գիտելիքները համադրելու, ստեղծագործելու հնարավորություն է տալիս աշակերտին:

- Կարելի է տալ հետևյալ ցուցումները՝
- ա) խմբում պետք է աշխատեն բոլորը.

բ) յուրաքանչյուր մասնակից պետք է ունենա իր պարտականությունը.

գ) պաստառը պետք է ներառի բանաստեղծության բովանդակությանն առնչվող նկարներ, նկարազարդումներ, բանաստեղծությունների բովանդակության վերաբերյալ դիտարկումներ, ինչպես նաև տրված բանաստեղծության թեմայով որևէ ինքնուրույն տեքստ՝ արձակ կամ չափածո:

Ներկայացնելիս բոլորը պետք է մասնակցեն:

Տրվում է ժամանակ: Աշակերտներն սկսում են աշխատել:

Քայլ 2

Խմբերը աշխատում են, ավարտում և ներկայացնում իրենց աշխատանքները:

Յուրաքանչյուր խմբի տրվում է կոնկրետ ժամանակ՝ կախված խմբերի քանակից և աշխատանքից:

Ամփոփում

Խմբերը կատարում են փոխադարձ գնահատում: Ուսուցիչն անում է իր դիտարկումները: Գնահատում աշակերտների աշխատանքը:

**ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Ավելորդը» պատմվածքը:
Պատմվածքի ժանրային բնութագիրը: Կերպար:
Գլխավոր և երկրորդական, դրական և բացասական
կերպարներ:**

ԴԱՍ 1 Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը:

Գրողի կենսագրությունն ուսումնասիրելը կարևոր է, որ երեխան ընդհանուր պատկերացում ունենա տվյալ գրողի ապրած ժամանակաշրջանի, մարդկային կերպարի, հիմնական ստեղծագործությունների մասին:

Նպատակ

Դասի նպատակն է Դերենիկ Դեմիրճյանի կյանքի և ստեղծագործության մասին ընդհանուր տեղեկությունների յուրացումը, Դեմիրճյանի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Աշակերտների ուշադրությունը հրավիրել գրողի դիմանկարին, ձեռագրին և ստորագրությանը: *Մտագրոհի* միջոցով գրատախտակին գրի առնել ստացած տպավորությունները:

Քայլ 2

Կարողալ դասագրքի նյութը Դեմիրճյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ: Ուշադրություն դարձնել լուսանցքում առկա տեղեկություններին գրողի նախասիրությունների, հետաքրքրությունների մասին, անհրաժեշտության դեպքում կազմակերպել քննարկում:

Քայլ 3

Պատասխանել կենսագրությունից և ստեղծագործության ընդհանուր բնութագրից հետո տրված հարցերին և կատարել առաջադրանքները:

Հնարավորության դեպքում դիտել ծածկագրված կոդով տեսանյութը:

Ամփոփում

Դասը կարելի է ամփոփել հարցերի և քննարկման միջոցով:

Անդրադարձ

Աշակերտը կունենա

- ա) Դերենիկ Դեմիրճյանի կյանքի, ուսումնառության, ստեղծագործության ընդհանուր բնութագրի իմացություն.
- բ) դրա շուրջ սեփական դատողություններ անելու կարողություն:

Հուշում

Դերենիկ Դեմիրճյանը յուրահատուկ գրական ճակատագիր ունեցող հայ գրողներից է: Գրական ասպարեզ է մտել Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Լևոն Շանթի և 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի մյուս հայ մեծերի հետ գրեթե միաժամանակ, ավելի շուտ, քան Վահան Տերյանը, Դանիել Վարուժանը, Եղիշե Չարենցը. եղել է «Վերնատան»

ակտիվ անդամներից մեկը, սակայն գրական մեծ ճանաչման արժանացել է շատ ավելի ուշ՝ 1920-ական թվականներից: Դեմիրճյանի կյանքն ու ստեղծագործությունը ներկայացնելիս պետք է շեշտել հենց այդ հանգամանքը: Երեխաների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ Դեմիրճյանը բազմաժանր հեղինակ է, գրական ասպարեզ է մտել բանաստեղծությամբ, բայց իբրև բանաստեղծ՝ զիջում էր իր սերնդակիցներին: Դա էր նաև պատճառը, որ նա հետագայում անցավ արձակի ու դրամատուրգիայի և այդ ժանրերում կարողացավ արժեքավոր գործեր ստեղծել: Ինչպես այդ շրջանի հայ գրեթե բոլոր գրողները, Դեմիրճյանը նույնպես ձգտում էր հաստատվել Թիֆլիսում: Ներկայացնել Թիֆլիսը որպես հայ գրական կյանքի կենտրոն, կանգ առնել «Վերնատուն» խմբակի գործունեության վրա:

ԴԱՍ 2-3

«Ավելորդը» պատմվածքը: Պատմվածքի ժանրային բնութագիրը:

Նպատակ

Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի միջոցով պատմվածքի ժանրային բնութագրի յուրացում:

Դասի ընթացքը

Քայլ 1

Աշակերտների ուշադրությունը հրավիրել պատմվածքից զետեղված նկարին: Կազմակերպել քննարկում մտածիր-գույգ կազմիր-քննարկիր մեթոդի միջոցով:

Քայլ 2

Հատվածաբար ընթերցել պատմվածքը: Զուգահեռ կարգալ լուսանցքում առկա նյութը պատմվածքի ժանրային բնութագրի մասին: Աշակերտներին հանձնարարել բացել տետրերը և կարդալուն զուգընթաց աշխատել առաջին հատվածի շուրջ: Աշակերտները մտքում կամ բարձրաձայն (հատվածաբար) կարդում են պատմվածքը: Աշխատում տետրում, բարձրաձայն քննարկում միասին:

Ամփոփում

Ըստ պատմվածքի մի հատվածի՝ բնութագրել ժանրը: Համեմատել այն բանաստեղծության հետ **Վենի դիագրամի** միջոցով:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- ա) պատմվածքի ժանրային բնութագիրը.
- բ) արձակ տեքստի շուրջ աշխատելու եղանակներից մի քանիսը:

Աշակերտը կկարողանա

- ա) զուգահդրել կերպարվեստի գործը և գրական երկը, դրանց միջև ընդհանրություններ գտնել, դրա շուրջ սեփական դատողություններ անել.
- բ) արձակ տեքստի շուրջ աշխատել կարդալուն զուգընթաց:

Հուշում

Պատմվածքի գործողությունները վերլուծելիս հնարավորինս քիչ շեշտել պատերազմի և եղեռնի թեման: Կարևորել իրավիճակը և ծայրահեղ պայմաններում մարդու հոգեբանության դրսևորումները: Բացատրել, որ նմատատիպ իրավիճակներ կարող են առաջանալ նաև ոչ պատերազմական վիճակներում:

Կարևորել Սրբունի՝ որպես հաշմանդամի կերպարը: Խոսել հաշմանդամություն ունեցող մարդկանց, նրանց՝ հասարակությանը լիովին ինտեգրվելու մասին:

Հանձնարարել աշակերտներից մեկին կամ մի քանիսին՝ գրել զեկուցում հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրների մասին:

«Ավելորդը» պատմվածք է: Ուշադրություն դարձնել ժանրային առանձնահատկություններին, գործողությունների ծավալմանը: Առանձնացնել կերպարները: Կերպարները լինում են դրական և բացասական, գլխավոր և երկրորդական: Բացատրել, թե ինչ հատկանիշներով է պայմանավորված կերպարի դրական և բացասական, գլխավոր և երկրորդական լինելը:

ԴԱՍ 4-5 Կերպար: Գլխավոր և երկրորդական, դրական և բացասական կերպարներ: Թեմայի ամփոփում:

Նպատակ

Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի միջոցով սովորեցնել գեղարվեստական երկի կերպարների տեսակները:

Դասի ընթացքը

Քայլ 1

Աշակերտների ուշադրությունը հրավիրել կերպարներին: Կերպարները բնութագրելու սկզբունքներ մշակել, օրինակ՝

- կերպարի արտաքինը.
- գործողությունները.
- բնավորության գծերը.
- շրջապատի հանդեպ վերաբերմունքը.
- շրջապատի վերաբերմունքը նրա հանդեպ.

- աշակերտի ինքնուրույն ձևավորած վերաբերմունքը նրա հանդեպ:

Քայլ 2

Տանը նախապես կարդացած հատվածի և առաջադրանքների քննարկում: Խմբային կամ զույգերով աշխատանքի կազմակերպում և կատարած աշխատանքի քննարկում:

Քայլ 3

Ամփոփել նախորդ դասերին սովորածը հարցադրումների, քննարկման կամ **ԳՈՒՍ** աղյուսակի միջոցով:

Ամփոփում

Կերպարներից մեկի անունից գրել մենախոսություն, դեպքերը ներկայացնել որևէ կերպարի անունից:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- կերպարների տեսակները

Աշակերտը կկարողանա

- կերպարների արարքների, շարժառիթների վերաբերյալ ինքնուրույն դատողություններ անել:
- բնութագրել գրական կերպարը, դրա մասին ներկայացնել ինքնուրույն ձևավորած վերաբերմունք:

**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Սպիտակ ձին» պատմվածքը:
Սյուժե (դիպաշար): Դիպաշարի բաղկացուցիչ մասերը:**

ԴԱՍ 1 **Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: Եղիշե Չարենց -
Ակսել Բակունց հարաբերությունները:
Եղիշե Չարենցի «Ա.Բ.-ին»
բանաստեղծությունը:**

Գրողի կենսագրությունն ուսումնասիրելը կարևոր է, որ երեխան ընդհանուր պատկերացում ունենա տվյալ գրողի ապրած ժամանակաշրջանի, մարդկային կերպարի, հիմնական ստեղծագործությունների մասին:

Նպատակ

Ակսել Բակունցի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին տեղեկությունների յուրացում, Բակունցի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացում կազմել:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Բակունցի լուսանկարին, ձեռագրին, ստորագրությանը, համեմատել արդեն ուսումնասիրած հեղինակների հետ:

Քայլ 2

Կարդալ դասագրքի նյութը, հնարավորության դեպքում դիտել Բակունցի կյանքի մասին տեսանյութը: Ուշադրություն դարձնել գրողի ծննդավայրին. դասագրքում առկա է Սյունիքի տեսարժան վայրերից մեկի՝ Տաթևի վանքի լուսանկարը: Կարևոր է գրողի կյանքն ուսումնասիրելիս նրա ծննդավայրի, բնաշխարհի մասին պատկերացում կազմելը:

Քայլ 3

Հանձնարարել տետրում աշխատել հարցերի և առաջադրանքների շուրջ: Լավ կլինի, որ որոշ նյութեր տպած տարբերակով տրամադրեք աշակերտներին, որ տեղում աշխատեն:

ԴԱՍ 2 «Սպիտակ ձին» պատմվածքը:
Պատմվածքի ժանրի իմացության
ամրապնդում: Կերպարների և նրանց
բնույթի ու տեսակների մասին
գիտելիքի ամրապնդում:

Նպատակ

Ժանրի և կերպարների մասին գիտելիքի ամրապնդումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Նախապես հանձնարարվում է ընթերցել պատմվածքը, առանձնացնել կերպարները, բնութագրել նրանց: Ընդ որում՝ աշխատանքը հնարավոր է կազմակերպել թե՛ անհատական, թե՛ խմբային ձևաչափով:

Քայլ 2

Ուշադրություն հրավիրել գործողություններին: Հանձնարարել հակիրճ վերաշարադրել հիմնական գործողությունները:

Անփոփում

Կազմակերպել քննարկում, թե ով ինչն է կարևորել և առանձնացրել:

ԴԱՍ 3-4

**«Սպիտակ ձին» պատմվածքը:
Սյուժե (դիպաշար): Դիպաշարի
բաղկացուցիչ մասերը:**

Նպատակ

Դասի նպատակը գեղարվեստական երկի մեջ նրա բաղկացուցիչ մասերը որոշելու և առանձնացնելու կարողության զարգացումն է:

Դասի ընթացքը

Քայլ 1

Կարդալ լուսանցքի նյութը սյուժեի բաղադրիչների վերաբերյալ: Այնուհետև հատվածաբար ընթերցել և կատարել առաջադրանքները:

Ուշադրություն դարձնել դիպաշարի բաղադրիչներին: Դրանց մասին տեղեկությունները տրված են հիմնականում այն հատվածներում, որտեղ սյուժեի այդ բաղադրիչն է:

Քայլ 2

Լուսանցքում առկա հարցերին պատասխանելը պարտադիր չէ բոլոր աշակերտների համար: Կարելի է առանձին-առանձին

հանձնարարել: Իսկ մնացած առաջադրանքները կատարել տանը:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- սյուժեի դիպաշարի բաղկացուցիչ մասերը: Դրանք տարբերակելու սկզբունքները:

Աշակերտը կկարողանա

- արձակ գեղարվեստական երկ ընթերցելիս ըմբռնել դիպաշարը, դրա կառուցվածքը, դիպաշարի բաղկացուցիչ տարրերի դերը գեղարվեստական երկում:

ԴԱՍ 5 Թեմայի ամփոփում

Նպատակ

Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի, գաղափարի, կերպարների, դիպաշարի բաղադրիչների մասին գիտելիքի ամփոփում:

Դասի ընթացքը

Պատմվածքից հետո տրված են անհատական և խմբային աշխատանքի ձևեր: Ըստ դասարանի պահանջի՝ կատարել դրանք:

Խրախուսել, որ ստեղծագործական հակում ունեցող աշակերտները գրեն պատմվածք՝ հաշվի առնելով իրենց սովորածը:

Ամփոփում

Ներկայացնել կատարած աշխատանքները: Համատեղ քննարկում և ինքնագնահատում կազմակերպել:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- Ակսել Բակունցի «Սպիտակ ծին» պատմվածքի դիպաշարը, գաղափարական բովանդակությունը, դիպաշարի կառուցվածքային տարրերը:

Աշակերտը կկարողանա

- կարդալուն զուգահեռ աշխատել տեքստի շուրջ.
- ինքնուրույն դատողություններ անել՝ հիմնվելով սովորած գիտելիքի վրա.
- գեղարվեստական երկում առանձնացնել դիպաշարի կառուցվածքային տարրերը:

ԴԱՍ 6

Արտադասարանական ընթերցում Բակունցի որևէ պատմվածք

Նպատակը

Խրախուսել երեխաների ինքնուրույն աշխատանքը, խթանել ընթերցասիրությունը:

Դասի ընթացքը

Դասը կարելի է կազմակերպել՝ հաշվի առնելով դասարանի պահանջները: Աշակերտներն իրենք կարող են ընտրել պատմվածքը և այն ներկայացնելու ձևաչափը:

Գեղարվեստական երկի շուրջ ինքնուրույն դատողություններ անել:

Ամփոփում

Կատարված աշխատանքի ներկայացում: Աշակերտներն իրենք են գնահատում իրենց աշխատանքը համատեղ կազմած սանդղակի միջոցով:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- Բակունցի պատմվածքներից ևս մեկը

Աշակերտը կկարողանա

- գեղարվեստական երկի շուրջ ինքնուրույն դատողություններ անել:

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը: «Հայրենի տուն» բանաստեղծությունը: Բանաստեղծական տուն: Բանաստեղծական տան տեսակները:

ԴԱՍ 1 Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը:

Նպատակ

Դասի նպատակը Նաիրի Զարյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների իմացությունն է, այդ տեղեկությունները մշակելու, մասերի բաժանելու, ներկայացնելու կարողությունների զարգացումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին և ստորագրությանը: Խրախուսել տպավորություններ և կարծիքներ հայտնելը:

Քայլ 2

Հատվածաբար կարդալ դասագրքի նյութը: Ուշադրություն դարձնել տեղավայրերին: Դ-աձև աղյուսակով համեմատել Զարյանի կյանքը այլ գրողների հետ:

Քայլ 3

Կատարել հարցերը և առաջադրանքները:

Ամփոփում

Ներկայացնել կատարած աշխատանքը:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- Նաիրի Զարյանի կենսագրության և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը.
- տեղեկություններ գրողի ապրած ժամանակաշրջանի մասին:

Աշակերտը կկարողանա

- ինքնուրույն կամ խմբով աշխատել տեղեկատվական տեքստի շուրջ.
- ինքնուրույն փնտրել և գտնել տեղեկություն, դրա մասին դատողություն կամ կարծիք գրել:

ԴԱՍ 2

**«Հայրենի տուն» բանաստեղծությունը:
Գաղափար բանաստեղծական տան
մասին: Հանգի մասին գիտելիքի
ամրապնդում:**

Նպատակ

Բանաստեղծության արտահայտիչ ընթերցանություն: Պատկերավորման միջոցների, բառապաշարի ընկալում և յուրացում:

Դասի ընթացքը

Քայլ 1

Լսել բանաստեղծության ձայնագրությունը: Արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը: Դուրս գրել պատկերավորման միջոցները:

Քայլ 2

Հիշել հանգավորման ձևերը: Բանաստեղծության հանգավորման տեսակը որոշել:

Քայլ 3

Կարդալ լուսանցքում առկա նյութը բանաստեղծական տան մասին: Վերհիշել ուսումնասիրած բանաստեղծությունների կառուցվածքը: Տների և տողերի կառուցվածքները:

Կատարել բանաստեղծությունից հետո տրված հարցերը և առաջադրանքները:

Ամփոփում

Ներկայացնել կատարած աշխատանքները:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը.
- բանաստեղծության տողերի, տների կառուցվածքը:

Աշակերտը կկարողանա

- ինքնուրույն դուրս գրել պատկերավորման միջոցները, ներկայացնել դրանց ոճական դերը.
- արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը, դրա մասին ինքնուրույն դատողություններ անել:

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ: Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը: Հատված «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպից

ԴԱՍ 1

Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը:

Գրողի կենսագրությունն ուսումնասիրելը կարևոր է, որ երեխան ընդհանուր պատկերացում ունենա սովորական գրողի ապրած ժամանակաշրջանի, մարդկային կերպարի, հիմնական ստեղծագործությունների մասին:

Նպատակ

Վահան Թոթվենցի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին տեղեկությունների յուրացում, Թոթվենցի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի վերաբերյալ պատկերացում կազմել:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Թոթվենցի լուսանկարին, ձեռագրին, ստորագրությանը, համեմատել արդեն ուսումնասիրած հեղինակների հետ:

Քայլ 2

Կարդալ դասագրքի նյութը, հնարավորության դեպքում դիտել Թոթովենցի կյանքի մասին տեսանյութը:

Ուշադրություն դարձնել գրողի կյանքի հետազոծին:

Կարևոր է գրողի կյանքն ուսումնասիրելիս նրա ծննդավայրի, բնաշխարհի, բնակության տարբեր վայրերի մասին պատկերացում կազմել:

Քայլ 3

Հանձնարարել անհատապես կամ զույգով աշխատել հարցերի և առաջադրանքների շուրջ, այնուհետև ներկայացնեն և կատարեն փոխադարձ ձևավորող գնահատում:

ԴԱՍ 2

Հատված «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպից

Նպատակ

«Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպի հատվածի բովանդակության ընկալում, աշխատանք բնագրի շուրջ, վեպի մասին ընդհանուր պատկերացում:

Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վեպից հատվածի միջոցով ինքնակենսագրական վեպի մասին ընդհանրական պատկերացում կազմել:

Դասի ընթացքը

Քայլ 1

Աշակերտների ուշադրությունը հրավիրել դասագրքում զետեղված նկարին: Կազմակերպել քննարկում մտածիր-զույգ կազմիր-քննարկիր մեթոդի միջոցով:

Քայլ 2

Բնագրի հատվածաբար ընթերցում և քննարկում՝ ուշադրություն դարձնելով լուսանցքում առկա հարցերին:

Քայլ 3

Խմբային կամ զույգով առաջադրանքների կատարում, այնուհետև աշխատանքի ներկայացում:

Ամփոփում

Քննարկվում է կատարված աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ է անում: Տրվում է ինքնուրույն յուրացման առաջադրանք: Հանձնարարվում է կարդալ վեպն ամբողջությամբ՝ գրելով կարծիք գաղափարի կամ կերպարներից մեկի մասին:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- վեպի բովանդակությունը, գաղափարը, ինքնակենսագրական երկի առանձնահատկությունները:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել վեպի գործողություններն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք երկի վերաբերյալ.
- համեմատել իր և հեղինակի ապրումները:
- համեմատել ինքնակենսագրական տարբեր վեպեր՝ նշելով ընդհանրությունները և տարբերությունները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ: Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը: «Թագադրում», «Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունները: Էքսպրոմտի ժանրային սահմանումը: Գաղափար պոեմի մասին:

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը:**

Նպատակ

Դասի նպատակն է Հովհաննես Շիրազի կենսագրության հիմնական դրվագներն իմանալը, ապրած ժամանակաշրջանի և նրա ստեղծագործության վրա ազդեցության մասին պատկերացում կազմելը և այն արտահայտելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Հովհաննես Շիրազի լուսանկարին, ձեռագրին, ստորագրությանը: Կազմակերպել *մտազրոհ* դրանց շուրջ:

Քայլ 2

Հատվածաբար ընթերցել դասագրքի նյութը, նախապես տպած հավելյալ նյութերը: Քննարկել դրանք հարց ու պատասխանի ձևաչափով:

Առաջարկվում է գործածել **բազմանիստ** մեթոդը՝ սկսելով Շիրազի անունից: Հիմնաբառով և վերջնաբառով կազմել մեկ

նախադասություն, որում անդրադարձ կլինի Շիրազի կյանքի և ուսումնառության վերաբերյալ տեղեկություններին:

Ամփոփում

Հարցերի միջոցով ամփոփվում է յուրացրածը, կատարվում է փոխադարձ լրացում: Ուսուցիչը հետևում է, որ բոլորը ներկայացնեն:

Անդրադարձ

Առաջարկվում է **ԳՈՒՍ** մեթոդը:

ԴԱՍ 2

«Թագադրում» բանաստեղծությունը: Մակդիրի որպես լեզվի պատկերավորության միջոցներից մեկի մասին գիտելիքի ամրապնդում:

Նպատակ

Բանաստեղծության բովանդակության և գաղափարի իմացություն: Պատկերավորման միջոցների ամրապնդում: Խոսքի մեջ մակդիրներն ըստ անհրաժեշտության կիրառելու կարողություն:

Դասի ընթացքը

Քայլ 1

Արտահայտիչ ընթերցել բանաստեղծությունը: Մի քանի նախադասությամբ արձակ կամ չափածո վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունը:

Դասագրքի 1-3-րդ վարժությունների կատարում:

Քայլ 2

Մակդիրի վերաբերյալ տեսական նյութի ընթերցում և մեկնաբանում: Բանաստեղծությունից համապատասխան

օրինակների դուրսգրում, դրանց համալրում ինքնուրույն օրինակներով:

Այդ մակդիրներից մի քանիսը գործածելով՝ կապակցված խոսքի ստեղծում:

Ամփոփում

Յուրաքանչյուրը կարդում է իր շարադրանքը: Դասընկերները փորձում են կռահել՝ որոնք են մակդիրները, կամ առաջարկում են նոր մակդիրներ:

Անդրադարձ

Անդրադառնում են բանաստեղծության հաղորդած տրամադրությանը, թեմային, կատարած աշխատանքներին:

ԴԱՍ 3

«Հայ ժողովրդի երգը» բանաստեղծությունը: Համեմատական վերլուծության կարողության զարգացում:

Նպատակ

Բանաստեղծության բովանդակության և գաղափարի իմացություն: Անձնական ապրումների ու կարծիքի ձևավորում: Բանաստեղծության կառուցվածքի, տաղաչափության և պատկերային համակարգի ընկալում: Չափածո տեքստի շուրջ տարաբնույթ աշխատանքներ անելու կարողություն:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ընթերցել «Հայ ժողովրդի երգը» և «Էքսպրոմտ» բանաստեղծությունները:

Բացատրել անծանոթ բառերը: Տեսական նյութի ընթերցում: Ըստ դրա երկու ստեղծագործությունների ժանրային բնութագրում:

Քայլ 2

Կատարել դասագրքի վարժությունները՝ հաշվի առնելով աշակերտների հետաքրքրությունները, ունակությունները և այլ հանգամանքներ:

Ամփոփում

Համեմատել երկու ստեղծագործությունները Վենի դիագրամի միջոցով՝ ներկայացնելով նմանությունները և տարբերությունները, ինչպես նաև ընդհանրությունները:

Անդրադարձ

Փոխադարձ հարցման և գնահատման միջոցով աշակերտներն ամփոփում են դասը: Ուսուցիչը շտկումներ և լրացումներ է անում:

**ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը:
Հատված «Մի կյանքի պատմություն»
ինքնակենսագրական վեպից:**

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը:**

Նպատակ

Դասի նպատակն է Ստեփան Զորյանի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին տեղեկությունների յուրացումը, Զորյանի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի և դրա ազդեցության վերաբերյալ պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին, ստորագրությանը:

Քայլ 2

Ընթերցվում է դասագրքի նյութը, ներկայացվում են հետաքրքիր դրվագներ գրողի կյանքից: Կազմակերպվում է քննարկում: Դասը կարելի է ամփոփել՝ հանձնարարելով ներկայացնել բանավոր ելույթ գրողի անունից:

Քայլ 3

Ամփոփվում է կատարված աշխատանքը: Հանձնարավում է ընթերցել դասագրքի հատվածը:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Ջորյանի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- հայտնել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ:

ԴԱՍ 2

Հատված «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպից

Նպատակ

«Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպի դասագրքային հատվածի բովանդակության ընկալում, աշխատանք բնագրի շուրջ, վեպի մասին ընդհանուր պատկերացում:

«Մի կյանքի պատմություն» վեպից հատվածի միջոցով ինքնակենսագրական վեպի մասին ընդհանրական պատկերացում կազմել:

Դասի ընթացքը

Քայլ 1

Աշակերտների ուշադրությունը հրավիրել դասագրքում զետեղված նկարին: Կազմակերպել քննարկում **մտածիր-զույգ կազմիր-քննարկի՛ր** մեթոդի միջոցով:

Քայլ 2

Բնագրի հատվածաբար ընթերցում և քննարկում՝ ուշադրություն դարձնելով լուսանցքում առկա հարցերին:

Քայլ 3

Խմբային կամ զույգով առաջադրանքների կատարում, այնուհետև աշխատանքի ներկայացում:

Ամփոփում

Քննարկվում է կատարված աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ է անում: Տրվում է ինքնուրույն յուրացման առաջադրանք: Հանձնարավում է կարդալ վեպի ամբողջությամբ՝ գրելով կարծիք գաղափարի կամ կերպարներից մեկի մասին:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- վեպի բովանդակությունը, գաղափարը, ինքնակենսագրական երկի առանձնահատկությունները

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել վեպի գործողություններն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք երկի վերաբերյալ.
- համեմատել իր և հեղինակի ապրումները
- համեմատել ինքնակենսագրական տարբեր վեպեր՝ նշելով ընդհանրությունները և տարբերությունները:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը: «Անտառում», «Մասրենի», «Անունդ տալիս» բանաստեղծությունները: Փոխաբերություն: Գաղափար կրկներգի (ռեֆրեն) մասին:

ԴԱՍ 1

Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը:

Նպատակ

Դասի նպատակն է Համո Սահյանի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին տեղեկությունների յուրացումը, Սահյանի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի և դրա ազդեցության վերաբերյալ պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Սահյանի նկարին, ձեռագրին, ստորագրությանը: Նախորդ դասարանի ծրագրից աշակերտներն արդեն ծանոթ են Սահյանի մի քանի ստեղծագործություններին: Կազմակերպվում է *մտազրոհ* Սահյանի անվան շուրջ:

Քայլ 2

Ընթերցվում է դասագրքի նյութը, նախապես պատրաստած հուշերը, հետաքրքիր դրվագներ գրողի կյանքից: Կազմակերպվում է քննարկում:

Մի քանի աշակերտ ներկայացնում են Սահյանի ծննդավայրի, ուսումնառության, աշխատանքային գործունեության մասին տեղեկություններ:

Անփոփում

5-րդ պեանոց շարադրանք՝ «Զրույց Սահյանի հետ»

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- Համո Սահյանի կենսագրության հիմնական դրվագները.
- Համո Սահյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը.
- Սահյանի ծննդավայրի ազդեցությունը նրա ստեղծագործական աշխարհի վրա:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Սահյանի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- հայտնել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ:

ԴԱՍ 2

**«Անտառում» բանաստեղծությունը:
Փոխաբերության (մետաֆոր)՝ որպես
գեղարվեստական պատկերավորման
միջոցի ըմբռնում:**

Նպատակ

Դասի նպատակն է բանաստեղծության բովանդակության, ոճական առանձնահատկությունների ընկալումը և յուրացումը: Փոխաբերության և դրա գործածության մասին գաղափար կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Մտազրոհ «անտառ» բառի շուրջ: 5-րուպեանոց շարահարանք «Անտառում» վերնագրով:

Այնուհետև ընթերցվում է բանաստեղծությունը: Անդրադարձ անծանոթ բառերին:

Քայլ 2

Աշակերտները կարդում են իրենց շարահարանքը, այն համեմատում բանաստեղծության հետ:

Այնուհետև կարդում են փոխաբերության վերաբերյալ տեսական նյութը: Բանաստեղծության մեջ առանձնացնում են փոխաբերությունները:

Ամփոփում

Փոխաբերությունների ինքնուրույն օրինակներ են բերում: Ովքեր կարող են, գրում են բանաստեղծություն կամ կապակցված խոսք՝ գործածելով փոխաբերություններ:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, պատկերային համակարգը.
- փոխաբերության սահմանումը, նշանակությունը:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.
- ընկալել պատկերային համակարգը.
- փոխաբերության ինքնուրույն օրինակներ բերել:

ԴԱՍ 3

«Մասրենի» բանաստեղծությունը: Համեմատական վերլուծության կարողության ամրապնդում:

Նպատակ

Դասի նպատակն է բանաստեղծության բովանդակության, ոճական առանձնահատկությունների ընկալումը և յուրացումը, համեմատական վերլուծության կարողության ամրապնդումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ընթերցել բանաստեղծությունը: Դուրս գրել անծանոթ բառերը, բացատրել դրանք:

Արձակ վերաշարադրել բովանդակությունը:

Քայլ 2

Բանաստեղծությունից դուրս գրել փոխաբերությունները: Հիմնավորել, որ դրանք փոխաբերություն են: Դրանցով կազմել նախադասություններ, որոնք առնչվում են բանաստեղծության բովանդակությանը:

Համեմատել բանաստեղծությունը և նկարը բանավոր կամ գրավոր:

Ամփոփում

Ներկայացվում է կատարած աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ է անում: կատարվում է աշակերտների փոխադարձ գնահատում:

Անդրադարձ

Աշակերտը կհիմանա

- բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, պատկերային համակարգը:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.
- ընկալել պատկերային համակարգը.
- փոխաբերության ինքնուրույն օրինակներ բերել:

ԴԱՍ 4

«Անունդ տալիս» բանաստեղծությունը: Պոեզիայի թեմատիկ տարբերությունների վերաբերյալ գիտելիքի ամրապնդում: Գաղափար կրկներգի (ռեֆրեն) մասին:

Նպատակ

Դասի նպատակը «Անունդ տալիս» բանաստեղծության բովանդակության, գաղափարի իմացությունն է: Պոեզիայի թեմատիկ տարբերությունների ընկալումը, կրկներգի (**ռեֆրեն**) մասին գաղափար կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Հերթով ընթերցում են բանաստեղծությունը: Կարելի է կազմակերպել ընթերցանության մրցույթ:

Այնուհետև բանաստեղծությունից դուրս են գրում բայերը, բովանդակությունը վերաշարադրում այդ բայերի օգնությամբ:

Քայլ 2

Տրվում են առանձին առաջադրանքներ դասագրքից՝ յուրաքանչյուրին ըստ իր կարողությունների:

Անդրադառնալ կրկներգին (**ռեֆրեն**):

Ամփոփում

Քննարկվում է կատարված աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ է անում: Տրվում է ինքնուրույն յուրացման առաջադրանք:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, պատկերային համակարգը.
- փոխաբերության սահմանումը, նշանակությունը:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.
- ընկալել պատկերային համակարգը.
- կրկներգի (ռեֆրեն) ինքնուրույն օրինակներ բերել:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը: «Քելե, լաո» բանաստեղծությունը:

ԴԱՍ 1 Կյանքը, ուսումնառությունը: «Քելե, լաո» բանաստեղծությունը:

Նպատակ

Դասի նպատակը Սիլվա Կապուտիկյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների իմացությունն է, այդ տեղեկությունները մշակելու, մասերի բաժանելու, ներկայացնելու կարողությունների զարգացումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին և ստորագրությանը: Խրախուսել տպավորություններ և կարծիքներ հայտնելը, նախնական գիտելիքներն արտահայտելը:

Քայլ 2

Հատվածաբար կարդալ դասագրքի նյութը: Ուշադրություն դարձնել տեղավայրերին, գրողի կյանքի քարտեզին:

T-աձև աղյուսակով համեմատել Կապուտիկյանի կենսագրությունը այլ գրողների կենսագրության հետ:

Քայլ 3

Պատասխանել հարցերին և կատարել առաջադրանքները

ԴԱՍ 2 «Քելե, լաո» բանաստեղծությունը

Նպատակ

«Քելե, լաո» բանաստեղծության բովանդակության, գաղափարի իմացությունն է:

Դասի ընթացքը

Քայլ 1

Մի քանի աշակերտներ հատվածաբար ընթերցում են բանաստեղծությունը: Այնուհետև բանաստեղծությունից դուրս են գրում անծանոթ բառերը, առանձնացնում են գրական և բարբառային բառերը, փորձում մեկնաբանել բարբառային բառերի կիրառությունը:

Քայլ 2

Տրվում են առանձին առաջադրանքներ դասագրքից՝ յուրաքանչյուրին ըստ իր կարողությունների:

Քայլ 3

Տրվում է ինքնուրույն յուրացման առաջադրանք:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, պատկերային համակարգը.

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.

**ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Հայաստան», «Քիչ ենք,
բայց հա ենք», «Ծնվել եմ» բանաստեղծությունները:
Տաղաչափական գիտելիքների ամրապնդում:
Անհանգ բանաստեղծություն:
Գաղափար վանկի և չափի մասին:**

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը:**

Նպատակ

Դասի նպատակն է Պարույր Սևակի կենսագրության հիմնական դրվագներն իմանալը, ապրած ժամանակաշրջանի և նրա ստեղծագործության վրա ազդեցության մասին պատկերացում կազմելը, սեփական կարծիքի ձևավորումն ու արտահայտումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել Սևակի ձեռագրին, լուսանկարին, ստորագրությանը: Նախնական գիտելիքների պարզում հարցադրումների միջոցով:

Քայլ 2

Ընթերցվում է դասագրքի նյութը, ինչպես նաև նախապես պատրաստած հետաքրքիր փաստերը, հուշերը, նամակները: Քննարկվում են դրանք:

Պարույր Սևակի հայտնի բանաստեղծություններից մի քանիսն ընթերցվում է: Դրանց շուրջ քննարկում է կազմակերպվում:

Ամփոփում

Յուրաքանչյուրը ներկայացնում է փաստեր Սևակի, նրա ծննդավայրի մասին: Անդրադարձ է կատարվում նրա ապրած ժամանակաշրջանին և կարևոր ստեղծագործություններին:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- Պարույր Սևակի կենսագրության հիմնական դրվագները.
- Պարույր Սևակի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը.
- Սևակի ծննդավայրի, ապրած ժամանակաշրջանի ազդեցությունը նրա ստեղծագործական աշխարհի վրա:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Սևակի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- արտահայտել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ:

ԴԱՍ 2

«Հայաստան» բանաստեղծությունը: Ներբող:

Նպատակ

Դասի նպատակն է բանաստեղծության բովանդակության, ոճական առանձնահատկությունների ընկալումը և յուրացումը, ներբողի մասին գաղափար կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ընթերցվում է բանաստեղծությունը:

Բացատրվում են անծանոթ բառերը:

Տրվում են հետևյալ հարցադրումները խմբային կամ զույգով աշխատելու համար՝

- Որո՞նք են Հայաստանի կարևոր արժեքներն ըստ բանաստեղծության:
- Ի՞նչ առանձնահատկություններ ունեն նրանք:
- Քեզ համար որո՞նք են Հայաստանի գլխավոր արժեքները և ինչո՞ւ:

Քայլ 2

Աշակերտները ներկայացնում են կատարած աշխատանքը: Իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ հարցեր են ուղղում դասընկերներին:

Ամփոփում

Բանաստեղծության մոտիվներով բնութագրել մեր հայրենիքը (արձակ կամ չափածո):

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- Բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, ոճական առանձնահատկությունները:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.

- ընկալել պատկերային համակարգը, հանգավորման առանձնահատկությունները.
- բանաստեղծության ոճին ու թեմային համապատասխան արձակ կամ չափածո խոսք կազմել:

ԴԱՍ 3

«Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը: Գիտելիք անհանգ բանաստեղծության մասին: Գիտելիք տաղաչափական վանկի ու չափի մասին:

Նպատակ

Դասի նպատակն է բանաստեղծության բովանդակության, ոճական առանձնահատկությունների ընկալումը և յուրացումը, տաղաչափական վանկի ու չափի մասին գաղափար կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Կարդալ բանաստեղծությունը: Կազմակերպել քննարկում դրա շուրջ: Համեմատել Սևակի այս և նախորդ ստեղծագործությունները:

Քայլ 2

Անհատական կամ զույգերով աշխատել տեքստի շուրջ: Դուրս գրել բանալի բառերը, հիմնավորել ընտրությունը:

Ամփոփում

Աշակերտները ներկայացնում են կատարած աշխատանքը: Կատարվում է գնահատում, դիտարկումներ:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, ոճական առանձնահատկությունները, տաղաչափական առանձնահատկությունները:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.
- ընկալել պատկերային համակարգը, հանգավորման և տաղաչափական առանձնահատկությունները.
- բանաստեղծության ոճին ու թեմային համապատասխան արձակ կամ չափածո խոսք կազմել:

ԴԱՍ 4

**«Ծնվել եմ» բանաստեղծությունը:
Բանաստեղծական շարքի մասին
գիտելիքի ամրապնդում: Հանգի մասին
գիտելիքի ստուգում: Թեմայի ամփոփում:**

Նպատակ

Դասի նպատակն է բանաստեղծության բովանդակության, ոճական առանձնահատկությունների ընկալումը և յուրացումը, տաղաչափական վանկի ու չափի մասին գաղափար կազմելը, թեման ամփոփելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ընթերցել բանաստեղծությունը: Ներկայացվում է «Մարդը ափի մեջ» շարքը: Քննարկվում է՝ ինչ է բանաստեղծական շարքը, ինչո՞ւ են բանաստեղծությունները գրվում շարքով:

Քայլ 2

Հանձնարարվում է դասագրքի 2-րդ վարժությունը: Կարող են կատարել թե՛ արձակ, թե՛ չափածո:

Ամփոփում

Աշակերտները ներկայացնում են կատարած աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ է անում: Իրենց գրածները համեմատում են բանաստեղծության հետ:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- բանաստեղծության բովանդակությունը, գաղափարը, ոճական առանձնահատկությունները, տաղաչափական առանձնահատկությունները.
- բանաստեղծական շարքի կառուցվածքը, առանձնահատկությունները:

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել բանաստեղծության բովանդակությունն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք բանաստեղծության վերաբերյալ.
- ընկալել պատկերային համակարգը, հանգավորման և տաղաչափական առանձնահատկությունները.
- բանաստեղծության ոճին ու թեմային համապատասխան արձակ կամ չափածո խոսք կազմել:

**ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: Գաղափար սցենարի մասին:
«Կանաչ դաշտը» պատմվածքը:**

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը:
Գաղափար սցենարի մասին:**

Նպատակ

Դասի նպատակն է Հրանտ Մաթևոսյանի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին տեղեկությունների յուրացումը, Մաթևոսյանի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի և դրա ազդեցության վերաբերյալ պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին և ստորագրությանը: Կազմակերպել քննարկում դրա շուրջ:

Հատվածաբար ընթերցել դասագրքի նյութը և լրացուցիչ հետաքրքիր նյութեր: Մեկնաբանել դրանք:

Քայլ 2

Կատարել դասագրքի առաջադրանքները: Դրանք կարելի է ընտրողաբար հանձնարարել: Պարտադիր չէ, որ բոլոր աշակերտները կատարեն նույն առաջադրանքը:

Տրվում է ժամանակ, և աշակերտներն աշխատում են:

Ամփոփում

Ներկայացնում են կատարած աշխատանքը: Կատարվում է փոխադարձ գնահատում և ինքնագնահատում: Ուսուցիչը դիտարկումներ է անում և տալիս ինքնուրույն յուրացման առաջադրանքներ:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- Հրանտ Մաթևոսյանի կենսագրության հիմնական դրվագները:
- Մաթևոսյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:
- Մաթևոսյանի ծննդավայրի, ապրած ժամանակաշրջանի ազդեցությունը նրա ստեղծագործական աշխարհի վրա:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Մաթևոսյանի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- արտահայտել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ.
- խմբով կամ անհատական ներկայացնել տեղեկություններ լսարանին:

ԴԱՍ 2

**«Կանաչ դաշտը» պատմվածքը:
Պատմվածքի ժանրային նկարագրի
վերաբերյալ գիտելիքի ստուգում և
ամրապնդում: Թեմայի ամփոփում**

Նպատակ

«Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքի և բովանդակության իմացություն:

Պատմվածքի հիմնական գաղափարի իմացություն:

Պատմվածքի գործողությունների մասին պատկերացում կազմելը:

Պատմվածքի կերպարների բնութագրում:

Պատմվածքից քաղած դասերը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել պատմվածքի նկարին: Կազմակերպել «Մտածիր և քննարկիր դասընկերներիդ հետ» առաջադրանքի կատարումը:

Այնուհետև սկսում են հատվածաբար ընթերցել պատմվածքը:

Կատարում են լուսանցքի առաջադրանքները: Դրանից մի քանիսը պետք է մանրամասնորեն կատարել դասարանում, բացատրել աշակերտին կատարման եղանակը, իսկ մնացածը հանձնարարել որպես ինքնուրույն յուրացման առաջադրանք:

Քայլ 2

Աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը: Կարևոր է, որ առաջադրանքները տրվեն ըստ ունակությունների և հնարավորությունների, սակայն խրախուսելի է, որ բոլորն էլ ինչ-որ չափով կատարեն տվյալ առաջադրանքը:

Ամփոփում

Ներկայացնում են կատարած աշխատանքը, ուսուցիչը դիտարկումներ է անում: Այնուհետև տրվում են ցուցումներ խմբային և անհատական աշխատանքի կատարման համար:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- պատմվածքի բովանդակությունը, սյուժեն, կերպարները.
- պատմվածքի գործողությունների միջավայրը.
- պատմվածքի հիմնական դասերը:

Աշակերտը կկարողանա

- ինքնուրույն վերարտադրել պատմվածքի բովանդակությունը.
- առանձնացնել կերպարները և բնութագրել նրանց.
- արտահայտիչ ընթերցել տեքստը.
- մեկնաբանել պատմվածքի կապը իր ապրած ժամանակաշրջանի հետ.
- ներկայացնել պատմվածքից իր քաղած դասերը:

Դասագրքում առկա լրացուցիչ նյութերը նպատակ ունեն ամրապնդել տվյալ թեմայի շուրջ աշակերտի գիտելիքները: Դրանք պակաս կարևոր չեն, քան հիմնական նյութերը: Ուսուցիչը կարող է սեփական հայեցողությամբ ընտրել այլ ստեղծագործություններ ևս: Լրացուցիչ թեմաներն ընտրելիս պետք է հաշվի առնել տվյալ դասարանում սովորողների կրթական կարիքները, ուսման առաջադիմությունը և, իհարկե, աշակերտների հետաքրքրությունները:

**ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Սիլիհտարի պարտեզները»
ինքնակենսագրական վեպը:**

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը:**

Նպատակ

Դասի նպատակն է Ջապել Եսայանի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագրի մասին տեղեկությունների յուրացումը, նրա ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի և դրա ազդեցության վերաբերյալ պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին, ստորագրությանը:

Քայլ 2

Ընթերցվում է դասագրքի նյութը, ներկայացվում են հետաքրքիր դրվագներ գրողի կյանքից: Կազմակերպվում է քննարկում: Դասը կարելի է ամփոփել՝ հանձնարարելով ներկայացնել բանավոր ելույթ գրողի անունից:

Քայլ 3

Ամփոփվում է կատարված աշխատանքը: Հանձնարարվում է ընթերցել դասագրքի հատվածը:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Ջապել Եսայանի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- հայտնել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ:

ԴԱՍ 2

Հատված «Սիլիտարի պարտեզները» ինքնակենսագրական վեպից

Նպատակ

Ինքնակենսագրական վեպի դասագրքային հատվածի բովանդակության ընկալում, աշխատանք բնագրի շուրջ, վեպի մասին ընդհանուր պատկերացում կազմել:

«Սիլիհտարի պարտեզները» վեպից հատվածի միջոցով ինքնակենսագրական վեպի մասին ընդհանրական պատկերացում կազմել:

Դասի ընթացքը

Քայլ 1

Աշակերտների ուշադրությունը հրավիրել դասագրքում գետնեղված նկարին: Կազմակերպել քննարկում **մտածիր-զույգ կազմիր-քննարկի՛ր** մեթոդի միջոցով:

Քայլ 2

Բնագրի հատվածաբար ընթերցում և քննարկում՝ ուշադրություն դարձնելով լուսանցքում առկա հարցերին:

Քայլ 3

Խմբային կամ զույգով առաջադրանքների կատարում, այնուհետև աշխատանքի ներկայացում:

Ամփոփում

Քննարկվում է կատարված աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ է անում: Տրվում է ինքնուրույն յուրացման առաջադրանք: Հանձնարավում է կարդալ վեպն ամբողջությամբ՝ գրելով կարծիք գաղափարի կամ կերպարներից մեկի մասին:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- վեպի բովանդակությունը, գաղափարը, ինքնակենսագրական երկի առանձնահատկությունները

Աշակերտը կկարողանա

- վերաշարադրել վեպի գործողություններն իր բառերով.
- արտահայտել սեփական կարծիք երկի վերաբերյալ.
- համեմատել իր և հեղինակի ապրումները
- համեմատել ինքնակենսագրական տարբեր վեպեր՝ նշելով ընդհանրությունները և տարբերությունները:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ: Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը: «Պատանեկություն» ինքնակենսագրական վեպը (հատված)

ԴԱՍ 1 Կյանքը, ուսումնառությունը: Ստեղծագործությունը:

Նպատակ

Դասի նպատակը Գուրգեն Մահարու կյանքի և ստեղծագործության վերաբերյալ ընդհանուր տեղեկությունների իմացությունն է: Այդ տեղեկությունը մշակելու, մասերի բաժանելու, ներկայացնելու կարողությունների զարգացումը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադիր նայել հեղինակի լուսանկարին, փորձել բնութագրել նրան որպես մարդու: Այնուհետև հատվածաբար ընթերցել կենսագրությունը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը՝ զուգահեռ քննարկելով կարդացածը:

Քայլ 2

Հնարավորության դեպքում դասագրքի 83-րդ էջի համապատասխան հղումով դիտել Մահարու մասին փաստագրական ֆիլմը և քննարկել:

Նյութի վերջում տեղադրված են հարցեր և առաջադրանքներ: Դրանք կարելի է հանձնարարել կատարել զույգերով կամ խմբերով:

Ամփոփում

Դասն ամփոփել արագընթաց հարցերի միջոցով:

Անդրադարձ

Աշակերտը կհիմնանա

- գրողի կյանքի հիմնական դրվագները.
- ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:

Աշակերտը կկարողանա

- բնութագրել հեղինակի ապրած ժամանակաշրջանը, ներկայացնել նրա կենսագրությունն այդ համատեքստում.
- հեղինակի կենսագրության և հիմնական դրվագները կապել ստեղծագործության հետ.
- համադրել փաստերը, հայտնել սեփական կարծիք, եզրակացություններ ձևակերպել:

ԴԱՍ 2

**«Պատանեկություն» (հատված):
Թեմայի ամփոփում:**

Նպատակ

«Պատանեկություն» ինքնակենսագրական վեպի՝ դիպաշարի, գաղափարի իմացություն:

Դասի ընթացքը

Քայլ 1

Հատվածաբար ընթերցել տեքստը: Դուրս գրել անծանոթ բառերը, բացատրել դրանք:

Քայլ 2

Զույգերով կամ անհատական կատարել 133-րդ էջի առաջադրանքները:

Քայլ 3

Բացատրել ամփոփիչ գործնական առաջադրանքը, տալ հրահանգներ և ցուցումներ՝ դրանք դասապատրաստման ժամանակ խմբերով կատարելու համար:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- «Պատանեկություն» ինքնակենսագրական վեպի դիպաշարը, կերպարները:

Աշակերտը կկարողանա

- ըմբռնել երկի գաղափարը.
- ընկալել լեզվաոճական առանձնահատկությունները.
- արտահայտել սեփական զգացողությունները.
- համեմատել իր կյանքի հետ և եզրակացություններ անել:

Ամփոփում

Հարցերի միջոցով ամփոփել «Գուրգեն Մահարի» թեման: Յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է երեք փաստ Մահարու և նրա երկերի վերաբերյալ, երեք բան, որ ամենից շատ գրավեց, երեք բան, որ սովորեց:

**ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Մամփրե արքան»
պատմվածքը: Թեմա և գաղափար: Թեմայի և
գաղափարի միասնությունը: Բարբառային բառերի
կիրառման գեղարվեստական նպատակը:**

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Մամփրե արքան»
պատմվածքը:**

Նպատակ

Դասի նպատակն է Մուշեղ Գալշոյանի կյանքի և ստեղծագործության մասին ընդհանուր տեղեկությունների յուրացումը, Գալշոյանի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանի և դրա ազդեցության վերաբերյալ պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին և ստորագրությանը: Կազմակերպել քննարկում դրա շուրջ:

Հատվածաբար ընթերցել դասագրքի նյութը և լրացուցիչ հետաքրքիր նյութեր:

Քայլ 2

Խմբերով կամ զույգերով աշխատանք գրողի ծննդավայրի, Սասունի, «Սասնա ծռեր» էպոսի մասին: Տրվում են նախապես պատրաստած նյութերը: Աշակերտները պատրաստվում են:

Ամփոփում

Ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը: Նշում են, թե ինչ նոր բաներ սովորեցին և ի՞նչ նոր բան կուզեին սովորել ինքնուրույն:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- Մուշեղ Գալշոյանի կենսագրության հիմնական դրվագները.
- Գալշոյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը.
- Գալշոյանի ծննդավայրի, ապրած ժամանակաշրջանի ազդեցությունը նրա ստեղծագործական աշխարհի վրա:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Գալշոյանի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- արտահայտել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ.
- խմբով կամ անհատական ներկայացնել տեղեկություններ լսարանին:

ԴԱՍ 2

«Մամփրե արքան» պատմվածքի օրինակով՝ գիտելիք ստեղծագործության թեմայի և գաղափար մասին: Կերպարի մասին գիտելիքի ամրապնդում և ստուգում: Թեմայի ամփոփում:

Նպատակ

«Մամփրե արքան» պատմվածքի կառուցվածքի և բովանդակության իմացություն:

Պատմվածքի հիմնական գաղափարի իմացություն:

Պատմվածքի գործողությունների և ժամանակաշրջանի մասին պատկերացում կազմելը:

Պատմվածքից դասեր քաղելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել պատմվածքի նկարին: Կազմակերպել «Մտածիր և քննարկիր դասընկերներիդ հետ» առաջադրանքի կատարումը:

Այնուհետև սկսում են հատվածաբար ընթերցել պատմվածքը:

Կատարում են լուսանցքի առաջադրանքները: Դրանից մի քանիսը պետք է մանրամասնորեն կատարել դասարանում, բացատրել աշակերտին կատարման եղանակը, իսկ մնացածը հանձնարարել որպես ինքնուրույն յուրացման առաջադրանք:

Քայլ 2

Աշակերտները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքը: Կարևոր է, որ առաջադրանքները տրվեն ըստ ունակությունների և հնարավորությունների, սակայն խրախուսել, որ բոլորն էլ ինչ-որ չափով կատարեն տվյալ առաջադրանքը:

Ամփոփում

Դասն ամփոփվում է խմբային և անհատական աշխատանքների ձևաչափի քննարկմամբ: Տրվում է առաջադրանք:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- պատմվածքի բովանդակությունը, սյուժեն, կերպարները.
- պատմվածքի գործողությունների ժամանակաշրջանը.
- պատմվածքի հիմնական դասերը:

Աշակերտը կկարողանա

- ինքնուրույն վերարտադրել պատմվածքի բովանդակությունը.
- առանձնացնել կերպարները և բնութագրել նրանց.
- արտահայտիչ ընթերցել տեքստը.
- մեկնաբանել պատմվածքի կապը իրենց ապրած ժամանակաշրջանի հետ.
- ներկայացնել պատմվածքից իր քաղած դասերը:

**ՈՒՒԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ: Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: «Նռնենիները» պատմվածքը:**

ԴԱՍ 1

**Կյանքը, ուսումնառությունը:
Ստեղծագործությունը: Օտարագիր հայ
գրող երևույթի սահմանումը:**

Նպատակ

Դասի նպատակն է Ուիլյամ Սարոյան կենսագրության հիմնական դրվագներին ծանոթանալը, ստեղծագործության ընդհանուր բնութագրի յուրացումը, «Նռնենիները» պատմվածքի թեմայի վերաբերյալ նախնական պատկերացում կազմելը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Ուշադրություն հրավիրել գրողի նկարին, ձեռագրին և ստորագրությանը: Կազմակերպել քննարկում դրա շուրջ: Ուշադրություն հրավիրել այն փաստին՝ ինչով է Սարոյանը տարբերվում տարվա ծրագրով ուսումնասիրած մյուս հեղինակներից: Մեկնաբանել «օտարագիր հայ գրող» հասկացությունը:

Հատվածաբար ընթերցել դասագրքի նյութը և լրացուցիչ հետաքրքիր նյութեր գրողի կենսագրության, ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ:

Քայլ 2

Աշակերտներին բաժանվում են թերթիկներ՝ Սարոյանի մտքերով: Զույգով կամ անհատական աշխատում են դրանց

շուրջ՝ կարդալով, մեկնաբանելով, ընտրելով դրանցից մեկը և հիմնավորելով ընտրությունը:

Ամփոփում

Այնուհետև չկրկնվող մտքերից ծաղկաքաղ են անում, դրանք գրում են գրատախտակին: Կազմակերպվում է քննարկում-գրույց դրանց շուրջ:

Անդրադարձ

Աշակերտը կհմանա

- Ուիլյամ Սարոյանի կենսագրության հիմնական դրվագները:
- Սարոյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:
- Սարոյանի ծննդավայրի, ապրած ժամանակաշրջանի ազդեցությունը նրա ստեղծագործական աշխարհի վրա:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել Սարոյանի կենսագրության հիմնական փաստերը, կապել դրանք հեղինակի ստեղծագործության հետ.
- արտահայտել սեփական կարծիք գրողի կյանքի և նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրի վերաբերյալ.
- խմբով կամ անհատական ներկայացնել տեղեկություններ լսարանին, մասնակցել քննարկում-գրույցին՝ ներկայացնելով սեփական դատողությունները:

ԴԱՍ 2

«ՆՆՆՆՆՆՆՆՆՆ» պատմվածքը:

Նպատակ

Դասի նպատակներն են՝ գաղափար պատմվածքի մասին, Սարոյանի պատմվածքի բովանդակությանը, գաղափարին ծանոթանալը, կերպարներին ծանոթանալը և նրանց բնութագրել կարողանալը:

Դասի ընթացքը

Քայլ 1

Հատվածաբար ընթերցել պատմվածքը՝ ուշադրություն դարձնելով գլխավոր հերոսների երկխոսություններին:

Քայլ 2

Պատասխանել լուսանցքում գրված հարցերին:

Քայլ 3

Գրել մենախոսություն գլխավոր հերոսներից մեկի անունից:

Ամփոփում

Աշակերտները ներկայացնում են կատարած աշխատանքը: Ուսուցիչը դիտարկումներ, շտկումներ է անում: Հանձնարարվում է ինքնուրույն յուրացման առաջադրանք:

Անդրադարձ

Աշակերտը կիմանա

- պատմվածքի ժանրային առանձնահատկությունները.
- Սարոյանի «Նռնենիները» պատմվածքը բովանդակությունը, կերպարները, գաղափարը:

Աշակերտը կկարողանա

- ներկայացնել պատմվածքի առանձնահատկությունները.
- բնութագրել կերպարներին.
- ներկայացնել սեփական ընկալումները.
- յուրովի մեկնաբանել հայրենիքի հանդեպ կարոտը, հայրենիքից հեռացած մարդու ապրումները:

«Գրականություն» առարկայի դասավանդման նպատակները և խնդիրները

Գրականության դասավանդումը ներառում է հետևյալ խնդիրները՝ ուսումնական ծրագրի մեջ ընդգրկված հայ և արտասահմանյան հեղինակների գործերի իմացություն.

- ծանոթացում գրական հիմնական սեռերին ու ժանրերին, գրական ուղղություններին ու դպրոցներին.
- ծանոթացում պատկերավորման ու արտահայտչական հիմնական միջոցներին.
- գրական երկի բովանդակության ընկալման, ենթատեքստի ըմբռնման, պատկերային համակարգի բացահայտման ունակությունների մշակում.
- գրական ստեղծագործությունը գնահատելու, կերպարները վերլուծելու, երկի կառուցվածքը, գաղափարական ու գեղարվեստական արժանիքները բացահայտելու կարողությունների ձևավորում.
- գրական ստեղծագործությունների և արվեստի այլ տեսակների միջև (թատրոն, կինո, կերպարվեստ, երաժշտություն և այլն) զուգահեռներ անցկացնելու կարողության ձևավորում.
- գրական թեմաներով շարադրանքներ, ռեֆերատներ, փոխադրություններ գրելու, զեկուցումներով և հաղորդումներով հանդես գալու, գրական-գեղարվեստական հանդեսներ, բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու և դրանք անցկացնելու կարողությունների մշակում, ինքնուրույն ստեղծագործական փորձերի խրախուսում:

Գրականության դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ բարոյություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյականային այլ հատկանիշներ:

- ստեղծագործության ժանրային առանձնահատկությունների իմացություն և դրանք տարբերակելու կարողություն.
- հեղինակի կյանքի և գործի մասին ընդհանուր տեղեկությունների իմացություն.
- գրական ստեղծագործությունների բովանդակության իմացություն և դրանք վերաշարադրելու կարողություն.
- ստեղծագործության հիմնական գաղափարը վերաշարադրելու կարողություն.
- գլխավորը երկրորդականից տարբերակելու կարողություն.
- գեղարվեստական երկը մասերի բաժանելու, դրանք վերնագրելու, գործողությունների պլան կազմելու կարողություն.
- գրական երկի կերպարներին բնութագրելու կարողություն.
- գրական երկի մեջ հավելումներ անելու կարողության զարգացում.
- անծանոթ բառերի բացատրություն, դրանք յուրացնելու և խոսքի մեջ ըստ անհրաժեշտության կիրառելու կարողության զարգացում:

Դասի պլանի ձևաթուղթ

Ուսուցչի անունը՝ _____

Դասարանը՝ _____

Ամիս, ամսաթիվ՝ _____

Տևողությունը՝ _____

Առարկան՝ _____

Դասի թեման՝ _____

Դասի նպատակները՝

1) Ակադեմիական _____

2) Սոցիալական _____

Դասի ընթացքը՝

Տնային աշխատանքի հանձնարարում:

Կիրառվող մեթոդները

Մտագրոհը (brainstorm) խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ հաճախ խրախուսվում է պարզապես ուսումնասիրվող նյութին այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը: Խմբի անդամների միջև կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ մեկնաբանության կամ գնահատական տալու փորձի: Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:

Դասախոսություն – քննարկում մեթոդը հանձնարարելի չէ նոր տեղեկատվության հաղորդման համար: Այն առավել արդյունավետ է սովորողներին արդեն հայտնի թեմաների շուրջ գրուցելու և դրանց իմաստավորման գործում սովորողներին օգնելու անհրաժեշտության դեպքում:

Վենի դիագրամ – այս մեթոդը կարելի է օգտագործել նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ՝ գաղափարները, երևույթները, անձերին միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Այն կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում, որտեղ նշվում են ընդհանրությունները:

Խճանկար (Ջիգսո) մեթոդի անվանումն ինքնին բնութագրում է մեթոդը: Սովորողները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է *հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորում են խմբային աշխատանքների արդյունքները:*

Շրջագայություն պատկերասրահում մեթոդը «Խճանկար» մեթոդի տարատեսակ է: Նպատակն է՝ փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

ԳՈՒՍ (Գիտեն-Ուզում եմ Սովորել-Սովորել եմ) աղյուսակը ստեղծվել է Դոնսա Օգլի 1986 թվականին: ԳՈՒՍ աղյուսակը կարող է օգտագործվել ցանկացած առարկայի ուսուցման ժամանակ ամբողջական կամ փոքր խմբերով: Կիրառումը ներառում է հետևյալ քայլերը.

- Ուսումնական առարկայի ընտրված հատվածի գլխավոր թեման գրեք ԳՈՒՍ աղյուսակի վերևում: Աշակերտներին հարցրեք, թե ինչ գիտեն դասի թեմայի մասին, և նրանց ասածները գրի առեք աղյուսակի առաջին **«Գ-ի՞նչ գիտենք արդեն»** սյունակում:
- Աշակերտներին հարցրեք, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն և գրանցեք դրանք աղյուսակի երկրորդ **«Ու-ի՞նչ ենք ուզում իմանալ»** սյունակում:
- Աշակերտներին օգնեք դասակարգելու իրենց գիտելիքներն ու հարցերը և մի առանձին ցուցակ կազմեք, անվանեք այն «Տեղեկատվության ինչ տեսակներից ենք ակնակալում օգտվել»:
- Աշակերտներին առաջարկեք կարդալ պատմությունը կամ ընտրված հատվածը և գտնել այն տեղեկությունները, որոնք պատասխանում են իրենց նախնական հարցերին կամ լրացնում են դրանք՝ ընդլայնելով թեմայի մասին պատկերացումները:
- Երբ աշակերտները վերջացնեն կարդալը, նրանց ուշադրությունը հրավիրեք երրորդ սյունակի վրա՝ **«Ս-ի՞նչ ենք սովորել»**: Առաջարկեք թվարկել թեմային վերաբերող նոր տեղեկություններ, որոնք հայտնաբերել են կարդալու ընթացքում, և գրի առեք դրանք երրորդ սյունակում:

Ահա թե ինչ տեսք ունի ԳՈՒՍ (Գիտեն-Ուզում եմ Սովորել-Սովորել եմ) **աղյուսակը**.

Գ Գիտեմ	Ու Ուզում եմ իմանալ	Ս Սովորել եմ
Գրեք այն տեղեկատվությունը, որ սովորողներն արդեն գիտեն այս սյունակում:	Գրեք այն տեղեկատվությունը, որ սովորողներն ուզում են սովորել այս սյունակում:	Ամփոփեք և գրեք այն տեղեկատվությունը, որ աշակերտները սովորել են դասի կամ թեմայի վերջում այս սյունակում:

Հինգրոպեանոց շարադրանք

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ բոլորի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքները:

Կարելի է տալ վերնագիր կամ թեմայի հետ առնչվող որևէ նկար և հանձնարարել հենց հինգ բոլորում հակիրճ շարադրել մտքերը: Կարևոր է հետևել ժամանակին, որպեսզի երեխան կարողանա ինքնակառավարման հմտություն ձևավորել:

Երեք բանալի և մեկ կողպեք

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, այն հիմնավորելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես

նան համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն: Կախված նյութի ծավալից՝ բանալիների քանակը կարող է ավելանալ: Օրինակ՝ մեկ կողպեք, հինգ բանալի և այլն:

Օրինակ՝ թեման՝ «Սասնա ծռեր» էպոս

Կողպեք (ամփոփիչ միտք)՝ Էպոսում արտահայտված են հայ ժողովրդի հավաքական երազանքները, կամքը, ազգային առանձնահատկությունները: 1. Էպոսի բոլոր ճյուղերում հայրենիքի շենացման թեման կա: 2. Էպոսի հերոսները ձգտում են ազատության: 3. Էպոսում արտահայտված է խաղաղ ասրելու դարավոր երազանքը:

Երկայուն (T-աձև) աղյուսակ

Երկայուն կամ T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և կազմակերպական ձևով, և կառուցվածքով: Այն, ինչպես նախորդ ձևերը, կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով լատինական T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, աշակերտները կարող են անդրադառնալ T-աձև աղյուսակին, երբ պատրաստվում են անհատապես կամ խմբով որևէ նախագիծ իրականացնել՝ կապված շրջապատի քննապահական (էկոլոգիական) խնդիրների հետ:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

T-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս՝ թե՛ բնագիտական, թե՛ հումանիտար:

Եռասյուն (M-աձև) աղյուսակ

Եռասյուն (M-աձև) աղյուսակը ևս գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով T-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հարմար միջոց է: Այն նույնպես կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Սա երեք սյունից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորոշումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երեք տարբեր պատասխանների (այո/ոչ/չգիտեմ, կողմ/դեմ/ձեռնպահ) կամ վերաբերմունք (համադրություն/հակադրություն/չեզոք) արտահայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, աշակերտները կարող են ևս մեկ անգամ անդրադառնալ T-աձև աղյուսակում ամփոփված խնդրին և վերանայել իրենց վերաբերմունքը՝ երկու բևեռներից բացի մի երրորդ՝ չեզոք դիրքորոշմամբ դիտարկելով այն:

Դրական կողմեր	Չեզոք կողմեր	Բացասական կողմեր

M-աձև աղյուսակը արդյունավետ է կիրառել դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածվել թե՛ անհատական աշխատանքի, թե՛ խմբային քննարկումների ժամանակ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտահայտիչ ընթերցանություն – կարողանալ ծանոթ և անծանոթ տեքստը կարդալ արտահայտիչ, սահուն՝ հաշվի առնելով տրամաբանական շեշտերը:

Ստեղծարարություն – համապատասխան հավելումներ, փոփոխություններ անել կամ սովորածը կիրառելով՝ նոր տեքստ կարողանալ ստեղծել

Բնութագրել – բանավոր կամ գրավոր խոսքով նկարագրել այս կամ այն երևույթը, կերպարը կամ արարքը:

Միջառարկայական կապեր – դասվանդվող առարկաների փոխկապակցված ուսուցման միջոցով նույն երևույթը տարբեր դիտանկյուններից ուսումնասիրելը

Ինքնակառավարում – ինքն իրեն կառավարելը, սեփական հույզերը, ապրումները զուսպ, տեղին արտահայտելու կարողությունը, հատկացված ժամանակը տրված աշխատանքի համար կառավարելու ունակությունը

Մեջբերում – բառացի քաղվածք որևէ տեքստից, երկից

Ուսուցման մեթոդներ – (հուն.՝ μέθοδος – ճանապարհ), փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 7 ԴԱՍԱԳՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.....	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	7
ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	9
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....	13
ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՄՈՒՇՆԵՐ	16
ԹԵՄԱ 1. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ	23
ԹԵՄԱ 2. ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ.....	33
ԹԵՄԱ 3. ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ	39
ԹԵՄԱ 4. ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ	45
ԹԵՄԱ 5. ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ.....	48
ԹԵՄԱ 6. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ	51
ԹԵՄԱ 7. ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ	55
ԹԵՄԱ 8. ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ	58
ԹԵՄԱ 9. ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ.....	64
ԹԵՄԱ 10. ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ	67
ԹԵՄԱ 11. ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	73
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԹԵՄԱ 12. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ	77
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԹԵՄԱ 13. ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ	81
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԹԵՄԱ 14. ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ	84
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԹԵՄԱ 15. ԹԵՄԱ 11. ՈՒԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ.....	88
ՀԱՎԵԼՎԱԾ.....	92
ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ԶԵՎԱԹՈՒՂԹ.....	94
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	101